ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ ԱՂԱՍՈՒ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՐԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Գևորգ Արամի Պողոսյան**

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան**

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ.-ի հուլիսի 8-ին, ժամը 12:00-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության թիվ 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ.-ի հունիսի 7-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Կ. Ե. Վարդանյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ընտանիքը՝ որպես սոցիալական խումբ, և նրա հետ կապված խնդիրները մշտապես գտնվել են հասարակագետների հետաքրքության շրջանակում: Տնտեսական ճգնաժամը, սոցիալական և քաղաքական լարվածությունը, հասարակական հարաբերությունների տրանսֆորմացիան, միջէթնիկական բախումները, հասարակության նյութական և սոցիալական բևեռացումը, մարդկանց արժեհամակարգի փոփոխությունները հանգեցնում են ընտանիքի ներքին հավասարակշռության խախտմանը: Սոցիալական, տնտեսական և հասարակական կյանքի ցանկացած փոփոխություն ընտանեկան ճգնաժամի առաջացման պատճառ կարող է դառնալ, որը դրսևորվում է ընտանիքի անկայունությամբ և աճող սերնդի վրա նրա սոցիալականացնող ազդեցության թուլացմամբ: Ներկայիս արագընթաց և ռադիկալ սոցիալական փոփոխությունների ժամանակաշրջանում ընտանիքի սոցիալ-դերային ուսումնասիրությունը դառնում է էլ ավելի արդիական, առավել ևս, որ ընտանիքի հետ կապված խնդիրները անհանգստացնում են թե՛ մասնագետներին, թե՛ հասարակությանն ընդհանրապես:

Ելնելով վերոնշյալ փաստերից՝ ընտանիքի սոցիալ-դերային հետազոտությունը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն, անհրաժեշտ է իրականացնել հետազոտություններ, որոնց նպատակը պետք է լինի ընտանեկան կյանքի խորքային գործընթացների մեջ ներթափանցելն ու ընտանիքի անդամների կյանքում ընտանիքի գործառույթների բացահայտելը:

Ժամանակակից ընտանիքի կենսագործունեության պահպանման համար անասելի կարևոր է նրա ներքին հավասարակշռությունը խաթարող ներքին ուժերին դիմակայելու ընդունակությունը: Անզեն աչքով կարելի է նկատել ընտանիքի համերաշխության մակարդակի, նրա ճկունության կապը ընտանեկան դժվարությունների հաղթահարման հետ: Այդ պատճառով էլ ընտանիքը՝ որպես սոցիալ-հոգեբանական դինամիկ համակարգ, նոր և խորացված հետազոտությունների կարիք է զգում սոցիալական հոգեբանության, անձի հոգեբանության և հոգեբանության այլ ոլորտների նորանոր ձեռքբերումների կիրառմամբ: Անհրաժեշտ է մշակել նոր մոտեցումներ էական և մշտապես գործող սոցիալ-հոգեբանական մեխանիզմների բացահայտման համար:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Քանի որ գործունեության տեսությունը և դերերի տեսությունը արդեն վաղուց մշակված են նախորդ հետազոտողների կողմից, մեր հիմնական նպատակն է հետևողականորեն կիրառել դերերի տեսությունը (որպես հատուկ տեսակի գործունեության տեսություն և սոցիալական դերի կատարում) ընտանիքի բազմակողմանի ուսումնասիրության համար՝ սկսած ապագա ամուսինների նախաամուսնական շփումից մինչև նրանց ընտանիքի գոյության ավարտը, ընտանեկան դինամիկայի բոլոր փուլերում: Նախորդ հետազոտողների կողմից խնդիրը այսպիսի ընդհանուր ձևով մշակված չի եղել, չնայած որ ընտանիքում կարգավիճակների և դերերի առկայության փաստը արդեն գիտակցում էին ընտանիքի առաջին հետազոտողները, սկսած Ժ.Ժ. Ռուսսոյից:

Սոցիալական դերերի մասին հիմնական պատկերացումների առաջին ստեղծողները (Տ. Սարբին, Ռ. Լինտոն, Ջ.Հ. Միդ, Ա.Մ. Ռոշեբլավ-Սպենլե, Մ. Միդ և մյուսները) լավ գիտեին, որ դերերի տեսությունը կարելի է կիրառել ընտանիքի

հետազոտության ոլորտում: Նրանց աշխատություններում պարբերաբար կարելի է հանդիպել կցկտուր հղումներ ընտանիքի և նրանում գոյություն ունեցող դերերի վերաբերյալ, սակայն դրանք բերվում էին ավելի շատ որպես օրինակներ: Այդպիսի հղումները կապված էին տարբեր ժողովուրդների, հիմնականում եվրոպական, ընտանիքների մասնավոր կողմերի հետ: Նախորդ հետազոտողները իրենց առջև նպատակ չեն դրել՝ ստեղծելու ընտանիքի դերային տեսություն:

Ընտանեկան հոգեբանության մեջ ընտանիքի ստատուս-դերային կառուցվածքի մասին գաղափարները սկսել են հանդես գալ այն հեղինակների աշխատություններում, որոնք մասնագիտացված էին սոցիոլոգիայի և ընտանիքի սոցիալական հոգեբանության ոլորտներում (արտասահմանյան հետազոտողներից՝ Ն. Սմելզեր, Է. Բերն, Մ. Բոուեն, Կ. Վիտակեր, Մ. Ջեյմս, Կ. Իմելինսկի, Գ. Կրայգ, Ս. Կրատոխվիլ, Ս. Մինուխին, Մ. Նիկոլս, Ռ. Ռիչարդսոն, Վ. Սատիր, Ռ. Սկիններ, Կ. Ռուդեստամ, Գ. Ֆիգդոր, Ջ. Հեյլի, Մ.Էրիքսոն, Ա. Շուտցենբերգեր; ռուսաստանյան և նախկին ԽՍՀՄ հետազոտողներից՝ Լ. Յա. Գոզման, Յ. Ե. Ալյոշինա, Տ.Վ. Անդրեևա, Ն.Ն. Օբոզով, Ռ.Վ. Օվչարովա, Ս.Ի. Գոլոդ, Ի.Ս. Կոն, Ի.Ի. Լունին, Մ. Ա. Մազմանյան, Ա.Ա. Նալչաջյան, Ն.Ի. Օլիֆիրովիչ, Ե.Տ. Սոկոլովա, Ա.Ս. Սպիվակովսկայա, Գ.Վ. Ստարշենբաում, Է. Թիյտ, Վ.Վ. Ստոլին, Վ.Ա. Սիսենկո, Գ.Գ. Ֆիլիպովա, Ի. Վոլկովա, Ի.Վ. Դորոն և ուրիշներ):

Դերային տեսության մասին, թեպետ և մակերեսորեն, նշվում էր նաև այն հետազոտություններում, որոնք նվիրված էին ընտանիքի ծագման պատմությանը, նրա զարգացմանը և տեսակների հերթափոխին տարբեր ժողովուրդների պատմության ընթացքում (Մ. Միդ, Բ. Մալինովսկի, Ռ. Հիլլ):

Նորմալ դերային վարքի խանգարումների մասին նշվում է այն աշխատություններում, որտեղ խոսվում է արյունապիղծ (ինցեստուալ) ընտանիքների հետազոտության արդյունքների մասին (Ջ. Տորման, Ս. Ուեյնբերգ), երեխաների սեքսուալ շահագործման հետ կապված հետազոտություններում (Դ. Ֆինկելհիր, Դ. Լուսսել), ինչպես նաև ընտանիքի առանձին անդամների մոտ ընտանեկան կյանքի յուրահատկությունների և սոցիալականացման ոճերի ազդեցության տակ շիզոֆրենիայի զարգացման գործընթացի հետազոտություններում (Գ. Բրաուն և ուրիշներ):

Հետազոտության նպատակը ընտանիքի դերային մոտեցման սոցիալ-հոգեբանական հայեցակարգի մշակումն է:

Հետազոտության օբյեկտն է ընտանիքի սոցիալ-հոգեբանական կառուցվածքը և դինամիկան, ընտանեկան կոնֆլիկտները, ամուսնալուծությունը և դրա հետևանքները, ընտանիքի և հասարակության կառուցվածքա-գործառույթային փոխադարձ կապերը և ազդեցությունը:

Հետազոտության առարկան է ընտանիքի անդամների կարգավիճակների և դերերի դինամիկ փոխադարձ կապը, ընտանեկան հարաբերությունների և ղեկավարման ձևերի տեղափոխումը սոցիալական այլ խմբեր, ընտանեկան կոնֆլիկտները, ճգնաժամերը, ամուսնալուծությունը և դրա հետևանքները:

Հետազոտության վարկածները

Յուրաքանչյուր ընտանիք կարգավիճակների և դերերի համակարգ է, իսկ անձի ձևավորումն ընտանիքում իրենից ներկայացնում է կարգավիճակա-դերային սոցիալականացում: Ելնելով այս դրույթից՝ ենթադրվում է, որ անձի ներգրավումը այլ սոցիալական խմբերում ունի տեղափոխման (տրանսֆերի) միտում, որի արդյունքում ներընտանեկան սոցիալականացման ժամանակ ձեռք

բերված դերային յուրահատկությունները (վարքային դրսևորումներ, դերակատարման ոճ) փոխադրվում են սոցիալական նոր միջավայր:

Ենթավարկածներ՝

1.Ընտանեկան դերերի մասին գիտելիքների փոխանցումը ավագ սերնդի կողմից նպաստում է զարգացող անձի մոտ դերային պատկանելիության գիտակցման զարգացմանը: Ընդ որում, որքան խոր և ամբողջական են երեխայի ունեցած գիտելիքները ընտանեկան դերերի և կարգավիճակների մասին, այնքան ավելի կայուն և իրատեսական են դերային սպասումները:

2.Յուրաքանչյուր անձի իդեալական ներընտանեկան դերը մտնում է նրա իդեալական «Ես»-հայեցակարգի կազմի մեջ՝ որպես նրա կարևոր ենթահամակարգերից մեկը:

3.Այլ սոցիալական միջավայրեր դերային հարաբերությունների, ընտանեկան սոցիալականացման ոճի տեղափոխման գործընթացը հաճախ լատենտ է և անձի կողմից ոչ ամբողջովին գիտակցված: Դրական փոխադրման դեպքում դերային մարտավարությունները և հարմարման միջոցները պահպանվում են, իսկ բացասականի դեպքում փոխարինվում են այլ դերային ոճերով և հարմարման միջոցներով: Ենթադրվում է, որ այս միտումներով է պայմանավորված դերային բախումների հնարավորությունը:

Վարկածների հետազոտման նպատակով առաջադրել ենք մի շարք **խնդիրներ՝**

1.Ընտանիքի գործնական և տեսական հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա, կիրառելով դերերի տեսությունը, բացահայտել ժամանակակից բջջային ընտանիքի կարգավիճակադերային կառուցվածքը, նկարագրել նորմալ, առողջ (ադապտիվ) և ախտածին (դեզադապտիվ) դերերը:

2.Բացահայտել ընտանիքում առաջնային հարաբերությունները, այդ թվում նաև ընտանիքի անդամների առաջնային դերային հարաբերությունները: Այդ նպատակով օգտագործել զրույցի, հարցման, սոցիոմետրիկ և սոցիալ-հոգեբանական հետազոտման այլ մեթոդներ, ինչպես նաև կատարել հոգեբանական գիտության մեջ կուտակված էմպիրիկ նյութերի մեթոդաբանական և տեսական վերլուծություն:

3.Բացահայտել դերային տիպիկ բախումները, որոնք առաջանում են ընտանիքում, ցույց տալ դրանց յուրօրինակությունը և դրանց լուծման եղանակները:

4.Մշակել և հիմնավորել ներընտանեկան հարաբերությունների, ղեկավարման ոճերի լայն հասարակության մեջ հնարավորին տրանսֆերի մասին գաղափարը: 5.Մշակել և հետևողականորեն կիրառել դերային մոտեցումը ընտանիքի կառուցվածքի, գործառույթների և դինամիկայի հետազոտման մեջ՝նպատակ ունենալով բացահայտել սոցիալական խմբի իրական սոցիալ-հոգեբանական կառուցվածքը, ներընտանեկան հիմնական կարգավիճակների և համապատասխան դերերի փոխադարձ կապը, ինչպես նաև բացահայտել այդ դերերի տարրերը՝ դերային սպասումները (էքսպեկտացիաներ):

6.Հետազոտել այդ կարգավիճակների և դերերի փոփոխությունները ժամանակի ընթացքում՝ սկսած ընտանիքի ստեղծման «պահից» մինչև նրա քայքայումը, որը կարող է կապված լինել մեծացած երեխաների հեռանալու, ամուսինների ծերացման և մահվան հետ:

7.Բացահայտել այն ճանապարհներն ու մեխանիզմները, որոնց օգնությամբ ընտանեկան սոցիալականացման միջոցները, մեխանիզմները և արդյունքները

տեղափոխվում են լայն հասարակություն՝ ինչ-որ չափով արտացոլվելով սոցիալական խմբի կառուցվածքի և ղեկավարման ոճի մեջ:

Սույն աշխատության մեթոդաբանական և տեսական հիմքն են՝ ռուսաստանյան հոգեբանության մեջ մշակված գործունեության տեսությունը (Ա.Ն. Լեոնտև, Ս.Լ. Ռուբինշտեյն, Բ.Գ. Անանև, Ա.Ա. Լեոնտև, Ա.Գ. Ասմոլով, Վ.Ն. Դրուժինին, Ի.Ս. Կոն, Ն.Դ. Լևիտով), ինչպես նաև ամերիկյան և եվրոպական սոցիոլոգների և սոցիալական հոգեբանների կողմից մշակված դերերի տեսությունը (Ջ.Հ. Միդ, Ռ. Լինտոն, Ռ. Մերտոն, Տ. Պարսոնս, Բ. Բիդդլ, Մ. Միդ, Տ. Սարբին, Է. Էրիքսոն, Գ. Բլումեր, Տ. Շիբուտանի և մյուսները): Ընտանեկան հոգեբանության և ընտանեկան դինամիկայի վերաբերյալ ընդհանուր դերային հայեցակարգի մշակման համար նախադրյալ են հանդիսացել հայրենական, ռուսաստանյան և արտասահմանյան այն հեղինակների աշխատությունները, որոնք իրենց առջև ծառացած խնդիրների լուծման ժամանակ կիրառել են գործունեության և դերային մոտեցումները, մասնավորապես ընտանեկան կոնֆլիկտների և ճգնաժամերի, ախտահարված ընտանիքների, ամուսնալուծությունների և միայնության խնդիրները վերլուծելիս (Ս. Կրատոխվիլ, Է.Գ. Էյդեմիլլեր, Վ.Վ. Յուստիցկիս, Ս.Խուդոյան, Ն.Ի. Օլիֆիրովիչ և համահեղինակներ):

Մենք անցկացրել ենք մեր ուսումնասիրությունները՝ ելնելով այն հիմնական դրույթից, համաձայն որի՝ սոցիալական խմբի կազմում գործող մարդու դերը մարդկային գործունեության կարևոր և յուրահատուկ մի ձև է: Դա այնպիսի սոցիալ-հոգեբանական գործունեություն է, որն ունի յուրօրինակ կառուցվածք և կատարվում է այլ սոցիալական դերերի կատարողների հետ սերտ համագործակցության պայմաններում: Հենց այդ պատճառով էլ մենք կարծում ենք, որ գործունեության տեսության և դերերի տեսության համադրությունը հնարավոր է:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ նշված հոգեբանական խնդիրները հետազոտվում են **սոցիալ-դերային մոտեցման** հետևողական կիրառման պայմաններում: Դերային մոտեցումը կարելի է կիրառել ընտանիքի խնդիրները, կառուցվածքը, գործառույթները և դինամիկան ուսումնասիրելու համար: Սույն աշխատանքում հենց այս տեսանկյունն է համարվում ամենաարդիականներից մեկը ընտանեկան խմբերը ուսումնասիրող գիտության մեջ: Մեթոդոլոգիական վերլուծության միջոցով դերերի սոցիալ-հոգեբանական տեսության դիրքերից կառուցված է ընտանիքում միջդերային փոխհարաբերությունների ուսումնասիրության ողջ համակարգը: Աշխատանքում բացահայտված են այն սկզբունքները, որոնք արտացոլում են ընտանեկան փոխհարաբերությունների առանձնահատկությունները, ինչպես նաև դիտարկված են ընտանիքի զարգացման փուլերը, ներընտանեկան սոցիալականացման և միջդերային կոնֆլիկտների հետևանքները, առանձնահատուկ քննարկման առարկա է դարձել դերային տրանսֆերի սկզբունքը:

Ելնելով վերոնշյալից՝ մեր կողմից կազմակերպվել և անցկացվել են ընտանեկան դինամիկայի մեթոդաբանական, տեսական և էմպիրիկ հետազոտություններ:

Տվյալ ատենախոսության մեջ դերային մոտեցումը համալրվում է մի շարք վարկածներով, և փաստորեն սկիզբ է դրվում ընտանիքի հետազոտման նոր սոցիալ-հոգեբանական ուղղության:

Հետազոտության մեթոդները և մասնակիցները: Հետազոտության ընթացքում իրականացվել է մի շարք մեթոդների համակարգ (դիտում, զրույց, թեստավորում, գործունեության արդյունքների վերլուծության մեթոդ, անկախ բնութագրումների մեթոդ, վիճակագրական վերլուծություն, կորելյացիոն վերլուծություն, ստացված տվյալների մաթեմատիկական վերլուծություն): Կիրառվել են նաև մի շարք մեթոդիկաներ՝ «Ամուսնությամբ բավարարվածության հարցարան» (Վ.Վ. Ստոլին), ընտանիքի հետազոտման կենսագրական մեթոդ, «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշում» մեթոդիկա (Կ. Թոմաս, ադապտացիան՝ Ն. Վ. Գրիշինայի), ընտանիքում դերերի բաշխման մեթոդ, «Ընտանեկան սոցիոգրամի» մեթոդ: Օգտագործվել է նաև դերային քարտային խաղ, «Ընտանիքի կինետիկ պատկեր» խաղը (Ռ. Բերնս և Ս. Կաուֆման), «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկա (Ա.Ն. Վոլկովա):

Հետազոտությանը մասնակցել են 240 ամուսնական զույգ, ինչպես նաև հետազոտված ընտանիքներում մեծացող երեխաները:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ ընտանիքի հոգեբանական հետազոտությունները համակարգված ձևով քննարկվում են սոցիալ-դերային տեսանկյունից, որտեղ ընտանեկան դերերի իրականացումը դիտվում է որպես ընտանիքի գործունեության կարևորագույն բաղադրիչ: Այն թույլ է տալիս նորովի բացահայտել ժամանակակից ընտանիքների առջև ծառացած հիմնախնդիրները, և լայն հեռանկար է բացում ընտանիքի հոգեբանության տեսական և գործնական բազմաթիվ հետազոտությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները, տեսական վերլուծության ընթացքում բացահայտված սկզբունքներն ու հայեցակարգերը արդեն իսկ օգտագործվում են բուհերում և միջին մասնագիտական հաստատություններում որպես ուսումնական նյութ «Ընտանիքի հոգեբանություն», «Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն» առարկայի դասավանդման համար, ինչպես նաև տարբեր հոգեբանական կենտրոններում, խմբային և ընտանեկան հոգեթերապիայում:

Կիրառական նշանակություն ունեցող տվյալները, որոնք ստացվել են ընտանիքի հոգեբանության հիմնախնդիրների մեթոդոլոգիական վերլուծության արդյունքում, որպես աղբյուր են ծառայում ներընտանեկան հարաբերությունների բարելավմանն ուղղված սոցիալ-հոգեբանական հանձնարարականների մշակման համար: Մի շարք հատուկ դպրոցներում և հաստատություններում ստացված նյութերն օգտագործվում են մանկավարժների կողմից ծնողների և երեխաների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացնելիս:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթներ՝

1. Ընտանիքում է, որ երեխան գոնե զգում, իսկ հետագայում էլ գիտակցում է, որ կան սոցիալական խմբերի կառավարման տարբեր ոճեր և եղանակներ: Երեխան, իհարկե, չի կարող գիտական հայեցակարգման ենթարկել իր դիտումներն ու ապրումները, բայց էմպիրիկ մակարդակով տարբերակում է ավտորիտար և ժողովրդավարական կառավարման ոճերը, ըստ կառավարման

ոճերի՝ ծնողների միջև գոյություն ունեցող հակասությունները կամ ներդաշնակությունը և այլն: Ըստ էության՝ պատմականորեն ներընտանեկան հարաբերություններում են ծագել (և ծագում են նաև այժմ) սոցիալական կառավարման հիմնական ոճերն ու մոդելները, իշխանությունն ու նրա տեսակները և այլն: Մենք կարծում ենք, որ այս գաղափարը կարող է շատ արդյունավետ լինել ոչ միայն ընտանիքի հոգեբանության բնագավառում, այլև սոցիալ-հոգեբանական ավելի լայն խնդիրներ արծարծելիս:

2. Ընտանեկան փոխհարաբերությունների նախնական և անմիջական ոլորտում է, որ մարդիկ գործնական պատկերացումներ են ձեռք բերում հիմնական սոցիալական գործընթացների՝ համագործակցության և մրցակցության մասին: Ընդ որում, եթե ընտանիքի անդամների միջև գերակշռողը համագործակցությունն է, ապա նման սոցիալ-հոգեբանական մթնոլորտում ձևավորված անձը, անցնելով այլ սոցիալական խմբեր, այնտեղ կտեղափոխի այդ ընդհանուր միտումը՝ առավելապես համագործակցելու հակումը: Իսկ եթե ընտանիքում հավասար չափով հանդես են գալիս և՛ համագործակցելու, և՛ մրցակցելու հակումները, ապա այլ խմբերում մարդու վարքը կլինի ավելի ճկուն ու տարբերակված, գուցե նաև ավելի իրատեսական: Այդտեղ նույնպես մենք տեսնում ենք տրանսֆերի երևույթը և լայն հասարակության կյանքի վրա ընտանիքի ազդեցության ևս մեկ ճանապարհ:

3. Ապրելով ներընտանեկան փոխհարաբերությունների այս բարդ ցանցում՝ յուրաքանչյուր անհատ ձեռք է բերում նաև հոգեբանական շատ բարդ կազմավորման հիմքերը՝ պատկերացումների մի համակարգ, որին հոգեբանները կոչել են «անձի անբացահայտ (լատենտ) տեսություն» (Դ. Մայերս, 1997 և այլք): Խոսքն այն մասին է, որ յուրաքանչյուր անհատ իր կյանքի ընթացքում պատկերացում է ձեռք բերում այն մասին, թե ինչ է մարդը, անձերի ինչպիսի տիպեր գոյություն ունեն, որոնք են մարդկանց վարքի հիմնական դրդապատճառները և այլն: Ընդ որում, մարդիկ այս համակարգն օգտագործում են առավելապես ենթագիտակցորեն, իսկ գիտակցում են միայն այն դեպքում, երբ այն գիտակցելու կոնկրետ խնդիր է դրվում նրանց առջև: Կասկած չկա, որ այս համակարգի հիմքը դրվում է ընտանիքում, իսկ դա նշանակում է, որ ընտանիքի հոգեբանական ուսումնասիրությունը կարևոր արդյունքներ կարող է տալ ոչ միայն տարիքային հոգեբանությանը, այլև անձի և սոցիալական հոգեբանությանը: Անկասկած է նաև, որ յուրաքանչյուր ոք, եթե գիտական հոգեբանություն չի ուսումնասիրում (իսկ նման մարդիկ բոլոր հասարակություններում մեծամասնություն են կազմում), ուրիշ մարդկանց հետ իր փոխհարաբերություններում ղեկավարվում է անձի իր «անհատական անբացահայտ տեսությամբ»: Նշենք նաև, որ այդ տեսությունը կարող է լրացվել ու մշակվել նաև հետագա ողջ կյանքի ընթացքում: Դրան նպաստում են նաև սեփական կենսափորձի վերլուծությունները, հոգեբանական ռեֆլեքսիան ընդհանրապես:

4. Տեսակետ, համաձայն որի՝ ընտանիքն ազդում է հասարակության վրա մի քանի ուղիներով. ընտանիքը ձևավորում է որոշակի անհատներ, որոնք ներթափանցելով տարբեր կազմակերպություններ, իրականացնում են այնտեղ

այն վարքագիծը, խնդիրների լուծման այն ոճը, որը նրանք ձեռք են բերել ընտանեկան սոցիալականացման ընթացքում: Առաջ են քաշվում մի շարք նոր վարկածներ այն մասին, թե ինչպես ընտանիքը կարող է ազդել հասարակության կյանքի և պետական կառավարման վրա: Սակայն, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր հասարակության մեջ, առավել ևս բազմազգ հասարակություններում գոյություն ունեն տարբեր տեսակի ընտանիքներ, այդ խնդրի լուծումը բավականին դժվար է:

5. Տեսակետ, համաձայն որի՝ ընտանիքի անդամների փոխադարձ էմպաթիան, առաջին հերթին նրանց կողմից ընտանիքում ունեցած իրենց կարգավիճակների և դերերի ընդունումը, ինչպես նաև միջդերային փոխազդեցությունը ազդում է նրանց անձի կայացման վրա: Էմպաթիան կանխարգելում է բախումները և ֆրուստրացիաները, նպաստում է ընտանիքի անդամների փոխադարձ ադապտացիային: Այս եզրակացությունը ունի նաև մեծ տեսական նշանակություն, քանի որ ցույց է տալիս, որ էմպաթիայի տեսությունը կարելի է կիրառել խմբերի, այդ թվում նաև ընտանիքի, սոցիալական հոգեբանության հետազոտություններում:

6. Ընտանիքը, ներկայացնելով իր անդամներին խիստ պահանջներ, հաճախ դառնում է բավականին սթրեսոգեն գործոն: Դրա հետևանքներից մեկն այն է, որ հասարակության մեջ ի հայտ են գալիս այնպիսի մարդիկ, որոնք ընդունակ չեն ունենալու նորմալ ընտանիք և ամուսնական հարաբերություններ, կամ այնպիսիք, որոնք չեն ցանկանում ներքաշվել այդպիսի բարդ և պատասխանատու հարաբերությունների մեջ:

7. Ընտանիքի հետազոտման դերային մոտեցումը միաժամանակ հանդիսանում է գենետիկ մոտեցում, որի էությունն այն է, որ թույլ է տալիս հասկանալ հետևյալը՝ ծնողը և երեխան, սկսած նրանց առաջին հանդիպումից, սոցիալականացնում են միմյանց, նրանց մոտ առաջանում են ծնողի և զավակի սոցիալական դերերը և կարգավիճակները, որոնք բազմաթիվ տարիների ընթացքում շարունակում են փոխկապակցված ձևավորվել՝ կրելով զանազան փոփոխություններ ընտանիքի զարգացման պատմության ընթացքում: Այսպիսի գենետիկ և միաժամանակ դերային մոտեցումը ավելի իրատեսական է և էվրիստիկ, քան նախկինում գոյություն ունեցող բիհեյվիորիստական մոտեցումը ծնող-երեխա հարաբերություններին: Մեր կարծիքով՝ այսպիսի մոտեցումը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ ընտանիքի անդամների փոխադարձ հարմարեցման գործընթացները:

8. Պաշտպանության է ներկայացվում նաև ընտանիքում միջանձնային բախումների առաջացման և զարգացման նոր հայեցակարգը, որը հնարավոր է առաջ քաշել միայն դերային մոտեցման կիրառման դեպքում: Մեր կողմից առանձնացվում են հետևյալ փուլերը՝ կողմերի **սպասումների միջև անհամապատասխանությունների առաջացման փուլ; այդ սպասումների բախման փուլ; կոնֆլիկտի սրացման փուլ**; և, վերջապես, **ճգնաժամի փուլ**, երբ կողմերն արդեն չեն կարող փոխկապակցված և համագործակցելով կատարել իրենց դերերը, այսինքն՝ իրականացնել դերային սպասումները: Մեր կարծիքով՝ այս հայեցակարգը կարելի է կիրառել ոչ միայն ընտանեկան, այլ նաև

միջանձնային այլ դերերի վերլուծության համար: Մեր կողմից բերվում են նման բախումների լուծման հնարավոր միջոցները:

9. Պաշտպանության են ներկայացված նաև հետևյալ դրույթները՝ ա) ճգնաժամը տարբեր կամ հակադիր սպասումների բախման ամենասուր ձևն է; բ) այսպիսի ճգնաժամերը ունեն իրենց զարգացման փուլերը: Մեր կողմից առանձնացվում են **պարզ** և **բարդ դերային ճգնաժամեր**՝ ելնելով դերային սպասումների բախումների քանակից, որոնք ուժգնանալով վերածվում են ճգնաժամի:

10. Մեր կողմից առաջարկված է ընտանեկան կոնֆլիկտների և ամուսնալուծությունների վերաբերյալ տեսակետ, համաձայն որի՝ նահապետական ընտանիքներում ճգնաժամերը կանխարգելվում էին շնորհիվ ամուսինների բազմակողմանի սոցիալական վերահսկման ընտանիքի անդամների, հասարակության և եկեղեցու կողմից: Մինչդեռ ժամանակակից բջջային ընտանիքներում նման վերահսկողություն չկա: Օրինակ՝ ծայրաստիճան թույլ է հասարակության և եկեղեցու վերահսկողությունը:

11. Պաշտպանության են ներկայացվում ամուսնալուծության վտանգ առաջացնող մեր կողմից առաջարկված պատճառները: Այստեղ մենք կարևորում ենք ընտանեկան հոգեթերապիայի դերը, որը կարող է արդյունավետ լինել միայն ընտանիքի վիճակի դերային վերլուծության դեպքում: Ամուսնալուծությունների կանխարգելման արդյունավետ միջոց կարող է դառնալ ապագա ամուսինների, ինչպես նաև արդեն ամուսնացած անձանց հատուկ ուսուցումը ընտանեկան դերերի վերաբերյալ:

Աշխատանքի հիմնական դրույթները **ներդրվել են** զեկուցումների տեսքով՝ մի շարք միջազգային և հանրապետական գիտաժողովներում (Մոսկվա 1981, 1989, 2010, 2011, Երևան 1984, 2011, 2012, 2013, Գերմանիա 2010, Աթենք, 1996, Երուսաղեմ (Իսրայել) 1997, Ստոկհոլմ 2000), Երևան քաղաքի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի, թիվ 2 հատուկ դպրոցի և Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացում, «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի մեթոդական և տեսական սեմինարներում:

Հետազոտությունից ստացված տվյալները կիրառվել են «Ընտանիքի հոգեբանություն» բուհական դասընթացի ուսումնական ծրագրերում, հոգեբանական խորհրդատվական կենտրոններում և սոցիալական ծառայություններում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 297 համակարգչային էջ, որտեղ ներառված է 11 դիագրամ:

Աշխատանքի բովանդակությունը

Առաջին գլուխը՝ «Ընտանիքի հոգեբանության ուսումնասիրությունը դերերի տեսության դիրքերից», նվիրված է ընտանիքի հետազոտման արդիական խնդիրներին: Հիմնվելով սոցիալական հոգեբանության ժամանակակից

ձեռքբերումներին՝ նկարագրված են մեծ և փոքր սոցիալական խմբերը: Նշված է փոքր սոցիալական խմբերի ուսումնասիրության հատուկ նշանակությունը, ինչը պայմանավորված է նրանով, որ մարդը իր կյանքի մեծ մասն անցկացնում է հենց այդպիսի խմբերի կազմում, որտեղ նրանք սերտորեն համագործակցում են խմբի մնացած անդամների հետ: Այս գլխում տրվում է ընտանիքի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, որպես փոքր խումբ: Նկարագրված են ընտանիքի անդամների փոխհարաբերությունների այնպիսի յուրահատկությունները, ինչպիսիք են երկարատևությունը, կայունությունը, համատեղ կենցաղը, ընտանիքում ամուսնական և արյունակցական հարաբերությունների առաջացումը: Հատուկ ընդգծված է այն, որ ընտանիքը հանդիսանում է մարդու կենցաղի և ընտանիքի անդամների միջև փոխադարձ օգնության կազմակերպման լավագույն ձևը:

Այս գլխում տրվում է ընտանիքի հետազոտության ընթացքում դերային մոտեցման կիրառման էությունը, հակիրճ շարադրված է նոր մոտեցում առաջադրվող **տրանսֆերի (տեղափոխման) սկզբունքը**:

Ընտանիքի ուսումնասիրության **դերային մոտեցումը** ներկայացվում է հետևյալ դրույթների ձևով. ա) Ընտանիքը, ինչպես յուրաքանչյուր քիչ թե շատ կայուն սոցիալական խումբ, իրենից ներկայացնում է կարգավիճակ-դերային համակարգ, այսինքն՝ նրանում առկա են լինում կամ առաջանում են որոշակի կարգավիճակներ և դրանց համապատասխան դերեր: բ) Այն անձինք, ովքեր ընտանիք են ստեղծում, նրանում ձեռք են բերում համապատասխան կարգավիճակներ (դրանք ամուսինների կարգավիճակներն են) և ինքնաբերաբար սկսում են կատարել համապատասխան դերեր: գ) Երբ ընտանիքում նոր անդամ է հայտնվում, ապա ինքնաբերաբար ձեռք է բերում իր կարգավիճակը և սկսում է համապատասխան դեր կատարել: դ) Անձի ձևավորումն ընտանիքում հիմնականում իրենից ներկայացնում է կարգավիճակ-դերային սոցիալականացում, չնայած անձը և նրա վարքը չեն կարող լիովին հանգեցվել միայն նրա կարգավիճակներին և դերերին, ե) Ընտանիքի նկատմամբ կարգավիճակ-դերային մոտեցումը պահանջում է նաև, որ մենք ընտանիքի ծագումն ու նրա տեսակների պատմական փոփոխությունները ևս դիտենք որպես կարգավիճակ-դերային համակարգի պատմական փոփոխությունների մի շարք, որը տարբեր էթնոմշակութային միջավայրերում ընթացել և շարունակում է ընթանալ որոշակի յուրահատկություններով:

Տեղափոխման կամ տրանսֆերի սկզբունքը, որը մենք առաջադրում և հիմնավորում ենք սույն գլխի երկրորդ և երրորդ ենթագլուխներում, հետևյալն է. ա) Յուրաքանչյուր ընտանիքում ձևավորվում են կարգավիճակներ, դերեր և դերակատարման յուրահատուկ ոճեր: բ) Երբ զարգացող և հասունացող անձը մտնում է սոցիալական այլ խմբերի և կազմակերպությունների մեջ՝ նրանցում կարգավիճակներ և դերեր ստանալով, ապա նրա վարքում դիտվում է միտում՝ դերի ըմբռնման և կատարման ոճի այն յուրահատկությունները, որոնք ձեռք են բերվել ներընտանեկան սոցիալականացման ընթացքում, անձը փորձում է տեղափոխել սոցիալական նոր խմբեր: Սա հենց **տեղափոխման կամ տրանսֆերի միտումն է**, որը հատկապես հստակորեն է դիտվում նոր խմբում

մարդու դերակատարման առաջին շրջանում: գ) Միաժամանակ նոր սոցիալական միջավայր տեղափոխվելու միտում են դրսևորում այն սոցիալական հմտությունները, որոնք հիմնականում ձեռք են բերվել և օգտագործվել ներընտանեկան և (մասամբ նաև) միջընտանեկան հարաբերություններում: դ) Տրանսֆերի այս միտումները նոր խմբերում դերակատարման և փոխհարաբերությունների հաստատման դժվարություններ են ծնում: Ընդ որում, կարելի է խոսել նաև **տրանսֆերով պայմանավորված դերային կոնֆլիկտների հնարավորության մասին**: Որքան մեզ հայտնի է, կոնֆլիկտի այս յուրատեսակ տարբերակի գոյությունը ըստ էության քննարկվում է առաջին անգամ: (Օրինակ՝ նոր խմբում աշխատանքի անցած պատանին իր ղեկավարից կարող է ակնկալել հայրական մոտեցում, մինչդեռ այդ անձը նրա հետ ունեցած հարաբերություններում կարող է վարվել ինչպես օտարացած և խիստ ձևական դեր կատարող ղեկավար):

Առաջին գլխի հետագա ենթավերնագրերում (1.3, 1.4, 1.5) դիտարկվում են դերերի և ստատուսների տեսության հիմնական դրույթները, որոնք հիմնադրվել են եվրոպական և ամերիկյան սոցիոլոգների և սոցիալական հոգեբանների շնորհիվ (Ջ.Գ. Միդ, Ռ.Սարբին, Ջ. Մորենո, սոցիալական հոգեբանության մեջ ինտերակցիոնիզմի ներկայացուցիչներ՝ Գ.Բլումեր, Տ. Շիբուտանի): Բերված են մեր ուսումնասիրության համար անհրաժեշտ տվյալներ դերերի և ստատուսների կառուցվածքի և գործառույթների, դրանց տեսակների, փոխադարձ կապերի մասին: Այստեղ հատուկ ընդգծվում են փոքր խմբերի անդամների դերերի և ստատուսների սերտ փոխադարձ կապը, դրանց հիմնական տարրերի՝ սպասումների փոխադարձ ներթափանցումը: Հակիրճ նկարագրվում է մարգինալ կարգավիճակի էությունը, ինչպես նաև ոչ միայն անհատների կարգավիճակների, այլև սոցիալական խմբերի ստատուսների էությունը, որոնք ձեռք են բերվում, երբ այդ խմբերը ներառվում են ավելի մեծ սոցիալական խմբի կազմի մեջ: Որպես դերի ձևակերպում բերվում և հետագայում օգտագործվում է Ռ. Լինտոնի կողմից առաջարկված ձևակերպումը՝ սոցիալական դերը կարգավիճակի դինամիկ ասպեկտն է, դրա իրագործումն է անհատի կողմից իր իրավունքների և պարտականությունների կատարման միջոցով: Դերը պարունակում է իր կատարման «սցենարը»: Սոցիալական հոգեբանության համար կարևոր է նկատի ունենալ, որ միևնույն դերի կատարումն ունի անհատական բնույթ և կարող է պարունակել ստեղծագործական տարրեր: Այս տեսության համաձայն՝ մարդիկ սոցիալական դերասաններ են, որոնք զանազան սոցիալական բեմերում կատարում են տարբեր դերեր: Հասարակության համար հատուկ նշանակություն ունեցող դերերը, դրանց համապատասխան վարքի առանձնահատկությունները նկարագրված են կանոնների, նորմատիվ ակտերի, օրենքների տեսքով, որոնք, ըստ էության, դերերի սոցիալական սցենարներն են:

Նույն այս գլխում մանրամասնորեն նկարագրվում են սոցիալական դերի կառուցվածքը և դերերի տեսակները: Ներկայացվում են «սոցիալական սպասում» և «դերային սպասում» հասկացությունները:

Առաջին գլխի վերջին՝ «Ընտանիքի դերային կառուցվածքը» ենթավերնագրում, ելնելով դերերի տեսությունից, նկարագրված են ընտանիքի

կառուցվածքը, միջընտանեկան ստատուսների և դերերի տեսակները: Հատուկ շեշտադրում է կատարված ընտանիքի ռեֆերենտայնությանը:

Այս գլխում նաև դիտարկվում են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են **դերային բազմությունը** (երբ մեկ կարգավիճակին համապատասխանում են մի քանի դերեր)**, դերային լարվածությունը** (որն առաջանում է խմբում մի քանի դերերի կատարման հետևանքով, ինչը բերում է սթրեսի և կոնֆլիկտային իրավիճակների)**:** Մենք նաև դիտարկում ենք ընտանիքը որպես համատեղ գործող մարդկանց թիմ: Մեկ առանձին ենթակետ նվիրված է ներընտանեկան հարաբերությունների մակարդակներին: Խոսքը առաջնային և երկրորդական հարաբերությունների մասին է, որոնք նույնպես վերլուծվում են դերերի տեսության հիման վրա:

Երկրորդ գլուխը՝ «Ընտանեկան սոցիալականացման հիմնական մեխանիզմները և կարգավիճակա-դերային հարաբերությունները ընտանիքում», նվիրված է ընտանեկան սոցիալականացման խնդրին, որը դիտարկվում է առավելապես որպես դերային սոցիալականացում, խոսվում է ընտանիքի կառուցվածքի և ընտանեկան ղեկավարման ոճերի դեպի լայն հասարակություն տեղափոխման (տրանսֆերի) մասին: Առաջին ենթագլխում մենք ցույց ենք տվել, որ շնորհիվ 1939 թ. «սոցիալականացում» տերմինի կիրառման (Ռ. Պարկ, Ջ. Դոլլարդ) տեղի ունեցավ այդ բարդ և պատասխանատու գործընթացի հանդեպ ունեցած մանկավարժական մոտեցումից անցում դեպի սոցիալ-հոգեբանական մոտեցմանը: Առաջ ենք քաշում նաև **սոցիալականացման մեխանիզմների** հիմնախնդիրը: Մենք պնդում ենք, որ սոցիալականացման իրական գիտական հետազոտումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այն դիտարկվում է որպես սոցիալականացման սուբյեկտների (ագենտների) և օբյեկտների դերային փոխազդեցություն, որի արդյունքն է անձի զարգացումը: Ավելին՝ առաջադրվել է մի գաղափար, համաձայն որի, եթե մենք ցանկանում ենք փոխել հասարակությունը, հասարակական հաստատությունները, ապա մեզ անհրաժեշտ է փոփոխել երեխաների դաստիարակման միջոցները: Ավելի կոնկրետ խոսում ենք դեպի այլ սոցիալական խմբեր ընտանեկան լիդերության և սոցիալիզացիայի տեղափոխման որոշակի գործընթացների էության մասին:

Այս գլխում առաջ ենք քաշում հետևյալ խնդիրը՝ օգտագործելով դերային սոցիալիզացիայի գաղափարը՝ հետազոտել հայտնի, սակայն գիտական բացատրություն չստացած այնպիսի երևույթները, ինչպիսիք են **հիպոսոցիալականացումը** և **հիպերսոցիալականացումը**, ինչպես նաև այսպիսի վարքագծեր ունեցող մարդկանց սոցիալական վարքը:

Դերային վերլուծության են ենթարկվել սոցիալականացման որոշ մեխանիզմներ. մեծահասակների վարքի սոցիալական մոդելների կրկնօրինակումը երեխաների կողմից, երեխաների նույնականացումը մեծերի հետ և այդ գործընթացի ընտրողական բնույթը: Կարծում ենք, որ երեխաների և դեռահասների սոցիալականացման խնդիրները կարելի է և պետք է հետազոտել նորովի, դերերի տեսության տեսանկյունից:

Երկրորդ գլխում հիմնավորվում է տրանսֆերի վարկածը, որը տվյալ պարագայում կարելի է արտահայտել հետևյալ կերպ. **ներընտանեկան**

հարաբերությունները որոշակի չափով տեղափոխվում են հասարակության մեջ՝ դառնալով մոդել այնպիսի հարաբերությունների համար, որոնք առաջանում են պետական և հասարակական հաստատություններում, ինչպես նաև «պետություն-ընտանիք» և «պետություն-քաղաքացի» հարաբերությունների համար:

Երկրորդ գլխի «Ընտանիքը որպես հասարակության մոդել» ենթագլուխը լիովին նվիրված է տրանսֆերի վարկածի հիմնավորմանը: Այստեղ քննարկվում է ընտանեկան և հասարակական հարաբերությունների փոխադարձ կապը:

Այս գլխում առաջադրում ենք երկու դրույթ, որոնք կարող են ընդունվել որպես դեռևս չուսումնասիրված մոտեցումներ և դրդել կատարելու նոր հետազոտություններ: Դրանք են. **1) Ավանդական հայրիշխանական ընտանիքներում հիմնականում ձևավորվում էին ավտորիտար տիպի անձնավորություններ, հետևաբար նրանց ազդեցության տակ հասարակության կառավարումը ևս պետք է հիմնականում ավտորիտար ոճ ունենար: 2) Փոքր և էգալիտար ընտանիքներում ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում ժողովրդավարական և ազատական տիպի անձինք, որի հետևանքով էլ, նման ընտանիքների ազդեցության տակ հասարակությունը ևս պետք է հիմնականում զարգանա դեպի ժողովրդավարություն՝ այնպիսի մի հասարակարգ, որտեղ անձի իրավունքներն առաջնային են:**

Կարծում ենք՝ այս երկու դրույթների հետևողական կիրառությունը թույլ կտա հասկանալ այն սոցիալական գործընթացներից շատերը, որոնք կատարվում են մեր օրերում հասարակության ժողովրդավարացման անվան տակ: Նշենք նաև, որ առանց ընտանիքների ժողովրդավարացման հասարակության և պետության ժողովրդավարացման գործընթացները չեն կարող հաջողության հասնել: Չի կարող ժողովրդավարական լինել այն հասարակությունը, որի ընտանիքների մեծամասնությունը պատկանում է ավանդական հայրիշխանական տիպին և կառավարվում է ավտորիտար ոճով:

Եվ իսկապես, հասարակության ապագա քաղաքացին սկսում է ձևավորվել հենց ընտանիքում, որը հասարակության փոքրիկ մոդելն է հիշեցնում: Կարծում ենք՝ ճիշտ են այն մտածողները, որոնք գտնում են, որ ընտանիքում կարելի է հանդիպել մարդկային հարաբերությունների գրեթե այն բոլոր տեսակներին, որոնք առկա են նաև մեծ հասարակության մեջ: Այդտեղ առկա են ամուսնական և ազգակցական, տնտեսական և իրավական, բարոյական և հոգեբանական հարաբերություններ: Անհրաժեշտ է միայն նկատի ունենալ, որ ընտանիքի ներսում այդ հարաբերություններից շատերը, հատկապես նրանք, որոնք երկրորդային են, ներկայացված են սաղմնային և «կծկված» ձևով, այստեղ դրանք ծավալվելու և տարբեր ձևեր ընդունելու համար անհրաժեշտ ասպարեզ չունեն: Բայց երբ տեղափոխվում են մեծ հասարակություն, ապա ծավալվում են, ճյուղավորվում, սկսած ինչ-որ մի փուլից՝ կոդավորվում և մասամբ օրենքների ու բարոյական կոդեքսների ձև ընդունում: Այդուամենայնիվ, թեև ընտանիքում այդ երկրորդային հարաբերությունները զարգացած և ծավալուն չեն լինում, ձևականացված ձևերը սաղմնային են մնում. երբ երեխան նախապես ծանոթ է լինում դրանց և համապատասխանաբար հարմարվում է, ապա դա հեշտացնում է

լայն հասարակության մեջ կողմնորոշվելն ու հարմարումը, դերերի ընդունումն ու դերակատարումները:

Այս գլխում ներկայացված են նաև Ջ. Մորենոյի տեսակետները խմբում մարդկանց ինքնաբուխ, ոչ պաշտոնական դերերի, այդ դերերի և կատարողի ինքնագիտակցության, անձի միջև եղած կապի մասին: Ջեկոբ Մորենոն, փաստորեն, հետազոտել է այն դերերը, որոնք առաջանում և կատարվում են սոցիալական խմբերի անդամների առաջնային հարաբերություններում: Այդ հարաբերությունների համակարգում առաջանում են ոչ պաշտոնական (սոցիոմետրիկ) ստատուսներ և դերեր, որոնք բացահայտվում են հատուկ սոցիոմետրիկ թեստի օգնությամբ: Սոցիոմետրիկ մեթոդը և ստատուսները մանրամասն նկարագրված են համապատասխան գրականության մեջ (Ջ. Մորենո, 1956; Ի.Պ. Վոլկով, 1972; Յ. L. Կոլոմինսկի, 1972, 1984):

Գաղտնիք չէ, որ գոյություն ունեն մի շարք նոր խնդիրներ, որոնք ընտանիքի հոգեբանության բնագավառում կարող են լուծվել սոցիոմետրական հետազոտությունների շնորհիվ: Դրանցից մեկն այն է, թե ընտանիքի ներսում ինչպիսին է նրա անդամների պաշտոնական և ոչ պաշտոնական (սոցիոմետրական) կարգավիճակների և համապատասխան դերերի փոխներգործությունը և այդ փոխներգործության ազդեցությունը դիտման համար մատչելի վարքի վրա: Ընդ որում, այդ փոխներգործություններն ու դրանց հետևանքները պետք է ուսումնասիրվեն ինչպես առանձին անձանց, այնպես էլ ողջ խմբի մակարդակում: «Սոցիոմետրիան ընտանիքի սոցիալական հոգեբանության մեջ» ենթավերնագրում քննարկվում է այն հարցը, որ **գոյություն ունեն դիրքերի և դերերի փոխներգործության երկու ձևեր (եթե հնարավոր չեզոք վիճակը չդիտարկենք). ա) փոխադարձ ուժեղացում (դրական փոխներգործություն) և բ) փոխադարձ արգելակում (բացասական փոխներգործություն):** Մենք կարծում ենք նաև, որ այս փոխհարաբերությունները կոնկրետ էմպիրիկ (փորձարարական) հետազոտության ենթարկելու նպատակով անհրաժեշտ կլինի նոր մեթոդիկա մշակել, մասնավորապես, ստեղծել նոր թեստ:

Մեր կարծիքով՝ չի կարելի ընտանիքում անձի դերակատարությունը միայն նրա գրաված պաշտոնական կարգավիճակի արտահայտությունը համարել: Այդ առումով կարծում ենք, որ անհատի ներընտանեկան դերային վարքը նրա պաշտոնական և սոցիոմետրական կարգավիճակների փոխներգործության գումարային արտահայտությունն է: Սոցիոմետրական կարգավիճակը դերային վարքի վրա մեծ մասամբ ազդում է ենթագիտակցական մակարդակում, բայց վարքում այդ ազդեցության հետքերը միշտ կարելի է նկատել: Օրինակ՝ ծնողներից մանկավարժները պահանջում են հավասար վերաբերմունք դրսևորել երեխաներից յուրաքանչյուրի նկատմամբ: Ծնողը կարող է համաձայնել և փորձել վարվել հենց այդպես, բայց նրա սոցիոմետրական դիրքը, ենթագիտակցության մակարդակում փոխներգործելով երեխաներից յուրաքանչյուրի սոցիոմետրական դիրքի հետ, անկախ նրա կամքից, հանգեցնում է վարքի տարբերությունների: Դա այն երևույթներից մեկն է, որին սովորաբար «սուբյեկտիվիզմ» են անվանում:

Այս գլխում նկարագրվում է նաև ընտանեկան սոցիոգրամմայի մեթոդը, որը ստեղծվել և կիրառվել է է.Գ. Էյդեմիլերի (1996, 2002, 2008) և նրա համագործակիցների կողմից: Այս մեթոդը իսկապես թույլ է տալիս բացահայտել ընտանիքի անդամների փոխհարաբերությունների կարևոր հոգեբանական կողմերը:

Քննարկվում են նաև այն տիպիկ խնդիրները, որոնք առաջանում են ընտանիքում: Այս խնդիրներն ուսումնասիրելիս մենք հիմնվում ենք այն պատկերացումների վրա, որոնք մշակվել են ռուսաստանյան հոգեբանության մեջ (Ա.Ն. Մատյուշկին, 1972; Օ.Կ. Տիխոմիրով, 1984 և այլոք):

Մենք կարծում ենք, որ ընտանեկան խնդիրների հանդեպ դերային մոտեցում կիրառելիս առաջանում են հետևյալ հարցերը. 1) Ինչպիսի՞ բնորոշ խնդիրներ և իրավիճակներ են ծագում ընտանիքներում; 2) Ինչպե՞ս են բաշխվում ընտանիքի անդամների դերերը այդ խնդիրների լուծման ժամանակ, և գոյություն ունե՞ն արդյոք այնպիսի դերեր, որոնք գոյանում են միայն խնդիրների լուծման ընթացքում; 3) Եթե նման դերեր գոյություն ունեն, ապա ինչպե՞ս են նրանք համագործակցում ընտանիքի անդամների հիմնական դերերի հետ, որոնք արդեն դիտարկվել են սույն ատենախոսության մեջ:

Ընտանեկան կյանքի տարբեր փուլերում հաճախ իրադրությունների թելադրանքով անհրաժեշտ է լինում ընտանիքի գլխավորի կամ մեկ այլ անդամի կողմից կտրուկ որոշումներ կայացնել որևէ խնդիր լուծելու նպատակով: Խնդրի լուծմանը միտված որոշումը կարող է պատճառ դառնալ հետագայում կամ ընտանիքի ամրապնդմանը կամ քայքայմանը: Առաջին դեպքում գործ ունենք «կառուցողական» (կոնստրուկտիվ կամ ինտեգրող) լուծման, երկրորդում՝ «հակակառուցողական», քայքայիչ (դեստրուկտիվ, դեզինտեգրող) որոշման հետ: Հիշյալ հետազոտողներն այսպիսի օրինակ են բերում, որը, ի դեպ, ընտանիքների կյանքում շատ հաճախ է դրսևորվում. կինը և տղամարդը պայքարում են ընտանիքում միահեծան լիդերական դիրք գրավելու նպատակով: Եթե առկա է այդպիսի պայքար, հետևաբար նաև կոնֆլիկտ, ապա դա նշանակում է, որ ընտանիքը սոցիալ-հոգեբանական վերակառուցման պահանջ է զգում: Եթե կոնֆլիկտն ավարտվում է այնպես, որ տղամարդուն հաջողվում է ստանալ առաջին լիդերի կարգավիճակ, իսկ կինը դառնում է նրա ենթական, և եթե ոչ միայն տղամարդն է գոհ լինում, որ ընդունվեց իր լիդերությունը, այլև կինը, որը, չնայած իր ձևականորեն ենթակա դիրքին, ընտանիքի կյանքի վրա ազդելու լուրջ լծակներ է ստացել, ապա դա նշանակում է, որ ընտանիքը ձեռք է բերում ավելի խելամիտ կառուցվածք: Ընտանիքի հետազոտողներն ընդգծում են նաև այսպիսի կարևոր փաստ. եթե մինչև խնդրի այդպիսի լուծման հասնելը ամուսիններին միմյանց էին կապում միայն զգացմունքները, իսկ չլուծված խնդիրը (կոնֆլիկտը՝ հանուն իշխանության) նրանց իրարից բաժանող և հեռացնող գործոն էր, ապա այժմ արդեն, զգացմունքների հետ միասին, նրանց կապում է նաև խնդրի խելամիտ լուծումը և դրա հետևանքով ձեռք բերված արդյունքը: Այժմ արդեն ծագող խնդիրը ձևակերպում է կինը, ներկայացնում է ամուսնուն, բայց այնպիսի ձևակերպումներով, որպեսզի ամուսինն ընդունի իր համար ցանկալի լուծման տարբերակը: Ամուսինը ներգրավվում է համապատասխան արարողակարգի մեջ,

կատարում է ընտանիքի գլխավորի իր դերը և որպես կանոն, կայացնում է կնոջ համար ցանկալի վճիռ: Երկուսն էլ գոհ են մնում: Այդպես, աստիճանաբար, ստեղծվում է ընտանեկան խնդիրների լուծման կայուն արարողակարգ (ծիսակարգ): Տեղի ունեցածը մենք դիտարկում ենք որպես ընտանիքի դերային վերակառուցում, որի հետևանքով այնպիսի կառուցվածք է ձևավորվում, որն ավելի արդյունավետ լուծումների է հանգեցնում, քան նախկին կառուցվածքը: Ստեղծվում են նոր կանոններ և սպասումներ, ամուսինների կարգավիճակներն ու դերերն ավելի հստակ ու տարբերակված են դառնում: Այդպիսի դերային համագործակցության շնորհիվ լուծված խնդիրները լավ են մտապահվում՝ դառնալով ընտանիքի կենսական ուղու «հանգուցակետեր»:

Քայքայիչ (դեզինտեգրացնող) ենք անվանում մնացած բոլոր տեսակի որոշումները (լուծումները): Դրանց ավելի նպատակահարմար է տալ «ոչ կառուցողական (ոչ կոնստրուկտիվ) որոշումներ» անվանումը: Ինչը ցույց է տալիս, որ դրանք ներընտանեկան խնդիրների լուծման արդյունավետ եղանակներ չեն: Դրանց թվին են դասվում՝.

1) Խնդիրը լուծելուց հրաժարվելը, ինչը նշանակում է, որ կոնֆլիկտը պահպանվում է, փոխադարձ հարաբերություններում առկա են զգուշավորություն և եսասիրական հակումների գերակշռություն՝ երևույթներ, որոնք վնաս են պատճառում ընտանիքի միասնականությանը:

2) Փոխադարձ զիջումներ կատարելը, որը կոնֆորմիստական վարքի ձևերից մեկն է: Այդ դեպքում ամուսիններից յուրաքանչյուրը որոշ չափով մեղմացնում է իր պահանջները, այդ պատճառով էլ մասամբ գոհ է լինում նման որոշումից, մասամբ էլ՝ դժգոհ: Փոխադարձ զիջողականությունն ու պահանջների չափավորությունը դառնում է ընտանեկան կյանքի հիմնական ռազմավարությունը և մարտավարությունը, կենցաղային յուրահատուկ «իմաստնություն»: Այդ դեպքում հարց է ծագում, թե արդյո՞ք նման փոխզիջողական (կոմպրոմիսային) որոշումները խնդիրների իսկապես լիարժեք լուծումներ են: Օրինակ, եթե ամուսինները պայքարում են հանուն լիդերական որոշակի դերի, բայց յուրաքանչյուրը դրան հասնում է միայն մասամբ, ապա կարելի՞ է արդյոք նրանց առջև դրված խնդիրը լուծված համարել: Արդյո՞ք ճգնաժամի պայմաններում նման ընտանիքը կկարողանա արագորեն ճիշտ ու արդյունավետ որոշումներ կայացնել: Կոնֆորմիստական համաձայնությունը գուցեև ընդունելի է կյանքի սովորական պայմաններում, բայց երբ ընտանիքը հայտնվում է ճգնաժամային վիճակում, կամ հասարակությունն է ամբողջությամբ այդպիսի վիճակում հայտնվում, ապա նման համաձայնությունը կարող է անբավարար լինել:

3) Ամուսիններից մեկը հրաժարվում է իր հավակնություններից: Օրինակ, եթե պայքար է ընթանում հանուն լիդերության, ապա կինը կարող է հրաժարվել հետագա պայքարից, կարող է դիմել նահանջի մարտավարության (կամ գուցե նույնիսկ ռազմավարության): Եթե այդպիսի ռազմավարությունը կիրառվում է հետևողականորեն, ապա ընտանիքի անդամներից մեկի ձեռքին են կենտրոնացվում ողջ իշխանությունն ու ռեսուրսները, իսկ մյուսները գրեթե

լիովին զրկվում են իշխանությունից:Այդպիսի դեպքերում, ինչպես նկատել են հոգեբանները, հաղթանակ տարած կողմի ինքնագիտակցության մեջ կարող է դիտվել ինքնագնահատականի անսովոր բարձրացում, երբեմն ոչ համարժեք բարձր ինքնագնահատական:

4) Ուղղակի քայքայում: Սա այն դեպքն է, երբ ընտանիքում ոչ մեկը մյուսին չի ենթարկվում: Յուրաքանչյուրն ընտրում է դերակատարման իր ձևն ու ոճը: Օրինակ, եթե խնդիրը վերաբերում է լիդերությանը, մնում է չլուծված, ընտանիքի անդամների միջև ուժեղանում է սառնությունը, հարաբերությունները դառնում են հոգեբանորեն ավելի աղքատիկ, շփումների թիվը նվազում է: Այդպիսի ընտանիքի յուրաքանչյուր անդամ համոզված է լինում, որ գլխավոր արժեքն անհատական ազատությունն է, որը չի կարելի սահմանափակել ոչնչով, այդ թվում նաև ընտանեկան կապերով:

Եթե ընդունենք, որ ընտանիքի հիմնական խնդիրը միասնականության և կուռ կառուցվածքի ապահովումն է, ապա իսկապես պետք է համաձայնվենք, որ վերը նկարագրված չորս լուծումներն էլ ապակառուցողական բնույթ ունեն, այսինքն հանգեցնում են ընտանիքի ներքին կառուցվածքի թուլացմանը, թեև, իհարկե, տարբեր չափով:

Դերային մոտեցումը թույլ է տալիս ավելի արդյունավետ հետազոտել խնդիրների լուծման ընթացքում նոր դերերի առաջացման և բաշխման գործընթացը:

Գիտակցել խնդրի առկայությունը՝ նշանակում է ինքն իրեն հաշիվ տալ, թե տվյալ պայմաններում իր որ նպատակն է անհասանելի, իր որ պահանջմունքները չեն բավարարվում և ինչու չեն բավարարվում: Դրան պետք է հետևեն ավելի մանրակրկիտ տեղեկությունների հավաքման և վերլուծության գործընթացները, խնդրի պայմանների վերլուծությունը և ենթադրությունների լուծման հնարավոր տարբերակների առաջադրումը: Հաջորդ փուլում անհրաժեշտ է լինում ընտրել դրանցից մեկը, այն, որն ամենահավանականն է թվում խնդիրը լուծող անձին: Ընտանիքի անդամները պետք է հասկանան, որ արտաքնապես ընկալվող հակասությունների, վեճերի և հասարակ թվացող տարբեր հարցերի շուրջ ծագող անհամաձայնությունների տակ թաքնված են լինում իրական և ավելի էական խնդիրներ, որոնց հաջող լուծման դեպքում այդ բոլոր դրսևորումները (որպես ախտանշաններ) կարող են անհետանալ ինքնաբերաբար, առանց անձի կողմից ջանքերի կիրառման:

Խնդրի լուծման գործընթացն ամբողջությամբ և հատկապես որոշումների կայացումը կատարվում են ոչ միայն իմացական մեխանիզմների, այլև ընտանիքի ներսում նոր դերերի ծագման և դրանց բաշխման շնորհիվ:

Քանի որ ընտանիքում յուրաքանչյուրն ունի իր քիչ թե շատ կայուն ընդհանուր կարգավիճակն ու դերը, ապա բնական է կանխատեսել, որ նոր ծագող իմացական դերերն անխուսափելիորեն պետք է փոխներգործության մեջ մտնեն այդ կայուն կարգավիճակների և դերերի հետ:

Խնդիրն ունի հետևյալ տեսանկյունները. 1) Նոր ծագած իմացական դերերն ինչպե՞ս են փոխներգործում ընտանիքի անդամների հիմնական և գիտակցված կարգավիճակների և դերերի հետ (հայր, մայր, ամուսին, տղա ու աղջիկ և այլն),

2) Ինչպե՞ս են այդ իմացական դերերը փոխներգործում անկասկած գոյություն ունեցող, թեև ոչ լրիվ գիտակցվող կամ բոլորովին չգիտակցվող սոցիոմետրական կարգավիճակների և դերերի հետ: 3) Արդյո՞ք այդ նոր ծնված դերերը կարող են հանգեցնել ընտանիքի անդամների նոր կարգավիճակների առաջացմանը:

Այդ խնդիրներից յուրաքանչյուրի վերաբերյալ փորձել ենք որոշ դրույթներ առաջադրել, որոնք այնուհետև կարող են կոնկրետ հետազոտությունների առարկա դառնալ: Նախապես նշենք, որ հետազոտությունների այս նոր ուղղությունը բավականաչափ հեռանկարային ենք համարում ընտանիքի հոգեբանության զարգացման համար:

Թեև ցանկալի է, որ իմացական դերերն անկախ լինեն ընտանիքի անդամների հիմնական պաշտոնական դերերից և նույնիսկ ամենացածր դիրքն ունեցող անդամը կարողանա ազատորեն ու անկաշկանդ ձևով մասնակցել ընտանեկան խնդիրների լուծմանը, այնուամենայնիվ փորձը ցույց է տալիս, որ խնդիրների լուծման գործում առաջնային դերը, թեև ոչ միշտ, բայց ձգտում է իր վրա վերցնել պաշտոնական լիդերը: Այն մասնագետները, որոնք զբաղվել են ընտանիքներում խնդիրների լուծման գործընթացների կոնկրետ փորձարարական կամ կլինիկական ուսումնասիրություններով, խորհուրդ են տալիս խնդիրներ լուծելիս հնարավորին չափով ազատվել պաշտոնական դերերից և ուշադրությունը լիովին կենտրոնացնել խնդրի լուծման վրա: Դերերն այստեղ պետք է ծագեն հենց խնդրի լուծման ընթացքում, այլ ոչ թե պարտադրվեն պաշտոնական կարգավիճակ ունեցողների կողմից: Միայն այդ դեպքում է, որ յուրաքանչյուրը՝ սկսած երեխայից մինչև ընտանիքի ամենատարեց անդամը, հնարավորություն կունենան իրենց ստեղծագործական ներդրումը կատարել խնդրի լուծման գործում (Է.Գ. Էյդեմիլլեր, Վ.Վ. Յուստիցկիս, 2008, էջ 108):

Բայց եթե երևան են գալիս «առաջատար», «օգնական», «պասիվ մասնակիցներ» և «հոռետեսներ», երբ տվյալ անձինք խորհրդանշվում են այդ կերպ, ապա այդ անվանում-խորհրդանիշերը ոչ այլ ինչ են, քան նրանց իմացական կարգավիճակների անվանումներ: Կարծում ենք, որ համապատասխան դերերից նոր տեսակի կարգավիճակների ծագումը իրական սոցիալ-հոգեբանական գործընթաց է: Այդպիսով՝ ընտանիքի հոգեբանության բնագավառում ձեռք բերված որոշ տվյալներ թույլ են տալիս առավել համոզիչ կերպով հիմնավորել նախորդ գլուխներից մեկում մեր կողմից առաջադրված այն **վարկածը**, ըստ որի՝ **ոչ միայն դերն է ծագում կարգավիճակի հիման վրա, այլև դերակատարությունն է հանգեցնում համապատասխան կարգավիճակի ծագման ու ձևավորման**: Սա մենք շոշափելի ներդրում ենք համարում ինչպես դերերի տեսության, այնպես էլ ընտանիքի սոցիալական հոգեբանության բնագավառում, որի մասին խոսում ենք երկրորդ գլխի՝ «Ընտանիքի հիմնախնդիրների լուծումը և իմացական դերերը» ենթավերնագրում:

Երկրորդ գլխի վերջում, կիրառելով նախորդ գլուխներում շարադրված արդյունքները և դերային մոտեցումը, դիտարկվում են «ընտանեկան ինժեներիայի» հիմնախնդիրները, որոնք առաջադրված են նախորդ հետազոտողների կողմից (Վ.Սատիր, 2007): Դերային մոտեցումը թույլ է տալիս

հաստատել այն փաստը, որ գործառույթների վերաբաշխումը ոչ այլ ինչ է, քան դերերի վերաբաշխում, որոնցից մի քանիսը կարող են լինել նոր ընտանիքի անդամների համար: Մասնավորապես վերաբաշխվում և նորովի ձևավորվում են ընտանիքի անդամների գենդերային դերերը: Այդպիսով, «ընտանեկան ինժեներիա» ասելով, պետք է հասկանալ ընտանիքի կենսագործունեության և դերային փոխներգործությունների բարեփոխում. խնդիր, որը պետք է հետաքրքրի բոլոր ընտանիքներին, ինչպիսի հասարակության մեջ էլ դրանք ապրելիս լինեն:

Երրորդ՝ «Ներընտանեկան կոնֆլիկտների էությունը և հաղթահարման ուղիները» գլխում հակիրճ շարադրվում են դերային բախումների տեսակները և էությունը: Նշվում է, որ դերային կոնֆլիկտները լինում են երեք տեսակի՝ 1) ներդերային; 2) միջդերային; 3) անձի և դերի միջև առաջացող կոնֆլիկտ:

Մենք ուշադրություն ենք դարձրել այն փաստին, որ թեև դերային կոնֆլիկտները սոցիալական հոգեբանության մեջ վաղուց հայտնի են (Ն.Դ. Լևիտով, 1969), սակայն ներընտանեկան կոնֆլիկտները դերերի տեսության տեսանկյունից մինչ այժմ ուսումնասիրված չեն:

Քննարկելով միջդերային կոնֆլիկտների հետազոտությունների արդյունքները՝ մենք ուշադրություն ենք դարձնում նաև այն փաստին, որ հասարակության մեջ կան բազմաթիվ ոչ համատեղելի դերեր, և նաև այն, որ այդպիսի կոնֆլիկտային վիճակների ապրումն ու դրանց տրվող գնահատականները կարող են մեծապես սուբյեկտիվ լինել, այսինքն քիչ համապատասխանել օբյեկտիվ իրականությանը: Մասնավորապես վերոբերյալ դեպքում դա նշանակում է, որ անձը հասցնում է բավականին արդյունավետ կատարել ինչպես իր ներընտանեկան, այնպես էլ մասնագիտական դերերը, բայց իրեն կարող է թվալ, թե վատ է կատարում: Այսպիսի սուբյեկտիվ գնահատականի առաջացումը կախված է տվյալ անձի հասունության և պատասխանատվության զգացումից:

Հոգեբանության և ընտանիքի հոգեբանության համար ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում դերային կոնֆլիկտի երրորդ տեսակը՝ «անձ - դեր» տեսակի կոնֆլիկտը: Սույն ատենախոսության երրորդ գլխում ներկայացված է այս կոնֆլիկտի վերաբերյալ նորույթը. անձը կարող է չտիրապետել դերի կատարման անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների (Ն.Վ. Գրիշինա, 2000), սակայն մինչ այժմ մասնագետները ուշադրություն չեն դարձրել այն փաստին, որ մարդը կարող է դերային կոնֆլիկտ ապրել նաև այն դեպքում, երբ ստիպված է կատարել պարզ դերեր՝ անձի հանդեպ ներկայացնելով այնպիսի սպասումներ, որոնք բավականին ցածր են իր ինտելեկտուալ հնարավորություններից: Մենք կարծում ենք, որ այս տեսակի դերային կոնֆլիկտները պետք է դառնան հատուկ հետազոտությունների առարկա, առավել ևս, որ այս խնդիրը շատ արդիական է ներկայումս: Օրինակ՝ ներկայումս Հայաստանում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած բազմաթիվ երիտասարդներ ստիպված են ապրուստ վաստակելու նպատակով զբաղվել, ասենք, առևտրով, կամ ոչ մասնագիտական այլ աշխատանքով: Անտարակույս է, որ այդ մարդկանցից շատերը տառապում են անձ-դեր տիպի կոնֆլիկտով, որից կարող են ձերբազատվել միայն այն դեպքում, եթե նրանց հաջողվի կատարել իրենց կրթությանն ու մտավոր զարգացմանը հարիր մասնագիտական գործունեություն:

Հետազոտելով դերային կոնֆլիկտների տարբեր տեսակները՝ մենք եկանք այն եզրակացության, որ դերային կոնֆլիկտների նկարագրված տիպերը և դրանց

լուծման ուղիներն ու ձևերը լայնորեն տարածված երևույթներ են: Այդ կոնֆլիկտների լուծման եղանակները կարելի է դիտել որպես անձանց և խմբերի սոցիալ-հոգեբանական հարմարման մեխանիզմներ և ստրատեգիաներ: Կոնֆլիկտներից յուրաքանչյուրի դեպքում տարբերվում են նաև անձի ապրումները և այն մեխանիզմները, որոնց օգնությամբ նրանք փորձում են լուծել կամ գոնե մեղմել դրանք և հասնել հարմարվածության որոշակի վիճակի:

Դերային կոնֆլիկտներն առաջ են բերում տագնապ, իրադրությունից հեռանալու միտում, աշխատանքի արդյունավետության նվազում, երբեմն նույնիսկ հիվանդություններ: Իհարկե, դերային կոնֆլիկտներ ապրող անձինք որոնում են նաև դրանց լուծման կառուցողական ուղիներ: Այդ բոլորը, այդ թվում նաև հիվանդությունը, հարմարվելու փորձեր են, հիվանդության դեպքում՝ ախտաբանական փոփոխությունների ճանապարհով:

Այս գլխում մենք առաջ ենք քաշել դերային կոնֆլիկտների տեսության ևս մի նոր հիմնախնդիր՝ այսպիսի **կոնֆլիկտների մակարդակների խնդիրը:** Դերային կոնֆլիկտները իրենց ուժգնությամբ լինում են տարբեր մակարդակի, սկսած շատ **թեթև,** մակերեսային մակարդակից մինչև **ուժեղ, քայքայիչ** մակարդակ, որը կարող է հանգեցնել անձի հոգեկան ցնցումների: Նման ճգնաժամային աստիճանի հասնող սրություն ունեցող դերային կոնֆլիկտների պայմաններում մարդկանց առջև ծառանում են բարոյա-հոգեբանական հարցեր, որոնք նկարագրված են Ժ. Պիաժեի և Լ. Կոլբերգի հետազոտություններում: Այստեղ ցույց է տրվում, որ դերային կոնֆլիկտները կարելի է ուսումնասիրել ավելի բովանդակալից, եթե համարենք, որ մարդու երկու կամ ավելի դերերի միջև առաջանում է մրցակցություն: Այսպիսի մոտեցում արդեն կիրառվել է ամերիկյան հոգեբանության մեջ (Պ. Գլիկ; տե՛ս Յ.Ե. Ալյոշինա, 1989):

Երրորդ գլխի մի քանի ենթավերնագրեր նվիրված են ներընտանեկան հարմարման տարբեր ասպեկտներին, ադապտացիան ապահովող պայմաններին: Առաջարկված է ամուսինների փոխադարձ ադապտացիայի բարելավման հիմնական նախադրյալների վերաբերյալ հիմնավոր դրույթներ:

Երրորդ գլխում նաև դիտարկվում է ներընտանեկան հարաբերություններում, ընտանիքի համախմբվածության ապահովման գործում էմպաթիայի դերը: Աշխատության մեջ ուսումնասիրվում է էմպաթիայի միայն մեկ առանձնահատուկ կողմը՝ որպես ընտանիքի անդամների փոխադարձ իդենտիֆիկացիայի մեխանիզմ, որպես ընտանիքի համախմբվածության ապահովման մեխանիզմ: Էմպաթիայի էության հակիրճ նկարագրությունից հետո մենք բացատրում ենք դրա ազդեցությունը անձի որակների և այլ հոգեկան գործընթացների վրա: Մենք պնդում ենք, որ ուժեղ էմպաթիայի և դրանից բխող իդենտիֆիկացիայի ազդեցության տակ անձի ամբողջ հոգեկան ակտիվությունը վերակառուցվում է, և նա սկսում է իդեալականացնել ինդենտիֆիկացիայի օբյեկտ հանդիսացող անձին:

Ներընտանեկան հարաբերություններում էմպաթիայի ունեցած դերի հարցին մեր մոտեցման նորույթը հանգեցնում է հետևյալ գաղափարին՝ ընտանիքի անդամների փոխադարձ էմպաթիան և հոգեբանական նույնականացումն առաջին հերթին ազդում են յուրաքանչյուր դերակատարի կողմից սեփական, ինչպես նաև մյուս անդամների դերերի ընդունման վրա: Էմպաթիկ հարաբերությունների դերային մոտեցումը թույլ է տալիս պնդել, որ համակրանքը հեշտացնում է դիմացինի դերի ընդունումը և համագործակցությունը: Եթե Ա անձը համակրում է Բ-ին, ապա նա ավելի պատրաստակամորեն է հարմարեցնում իր դերի

կատարումը Բ անձի դերին, ամեն կերպ խուսափելով դերային կոնֆլիկտներից: Երբ խոսում ենք այն մասին, որ էմպաթիան կանխում կամ թուլացնում է ֆրուստրացիաները, այդ թվում նաև այնպիսիք, որոնք ծագում են դերային կոնֆլիկտների ազդեցության տակ, երբ այդ կոնֆլիկտները համակրանքի և սիրո ազդեցության տակ մեղմվում են, ապա ֆրուստրացվածության վիճակները ևս թուլանում և հաճախ նույնիսկ անհետանում են: Միջդերային հարմարումը այդ կերպ ավելի ամբողջական և կայուն է դառնում:

Երրորդ գլխի մեկ առանձին ենթավերնագիր նվիրված է մարդու անընդունակությանը՝ ընտանիք ստեղծելուն և ընտանեկան կյանք վարելուն:

Պարզ է մեկ բան. յուրաքանչյուր հասարակության մեջ կան այնպիսի մարդիկ, որոնք ի վիճակի չեն ապրելու նորմալ ընտանեկան կյանքով: Լինելով պատրաստ տարիքային և ֆիզիոլոգիական առումով՝ նրանք հոգեբանորեն ձևավորված չեն ընտանիք ստեղծելու համար: Այսպիսով՝ կասկած չկա, որ յուրաքանչյուր հասարակության մեջ կան մարդիկ, որոնք ընդունակ չեն ստեղծել ընտանիք:

Այդպիսի մարդկանց շարքին են դասվում համասեռամոլները, լուրջ հոգեկան խանգարում ունեցողները, մտավոր հետամնացները: Հնարավոր է, որ գոյություն ունեն նաև այլ խմբեր, սակայն դա հնարավոր է պնդել միայն լուրջ սոցիալ-հոգեբանական և հոգեախտորոշիչ հետազոտությունների հիման վրա:

Անհրաժեշտ է նշել, որ վերոգրյալից չի կարելի հետևություն անել, թե բոլոր այն մարդիկ, որոնք չեն ստեղծել ընտանիք, ունեն լուրջ հոգեբանական շեղումներ և ընդունակ չեն ապրելու ընտանեկան կյանքով: Բանն այն է, որ հենց հասարակությունը կարող է ունենալ ախտաբանական կողմեր, որոնք թույլ չեն տալիս նորմալ մարդկանց ստեղծելու ընտանիք՝ աղքատություն, գործազրկություն, քաղաքական հանգամանքներ և այլն:

Եվ վերջապես, միայնակ կարող են մնալ նաև այնպիսի ռոմանտիկ հոգեկան աշխարհ ունեցող անձինք, որոնք համոզված են, որ ամուսնանալ կարելի է միայն իսկական սիրով սիրելու դեպքում: Չհանդիպելով նման սիրո արժանի թեկնածուի՝ նրանք ժամանակ են կորցնում, չեն օգտվում այլ հնարավորություններից և մենակ են մնում:

Գոյություն ունի ևս մեկ խնդիր: Երբ մենք խոսում ենք ընտանիք ստեղծելու և ներընտանեկան դերեր կատարելու ընդունակության, ինչպես նաև դերային հարմարման ընդունակության կամ անընդունակության մասին, ապա անմիջապես էլ հարց է ծագում՝ մի՞թե այդպիսի անընդունակությունը կամ ընդունակությունը բոլոր մարդկանց մոտ նույնն է: Ակնհայտ է, որ այդպես չի կարող լինել: Հետևաբար մենք կարող ենք խոսել ամուսնական և ընտանեկան կյանքով ապրելու ընդունակության և անընդունակության տարբեր աստիճանների մասին: Անհրաժեշտ է գտնել այդպիսի մակարդակների առանձնացման չափանիշներ: Դրանց գոյության դեպքում ընտանեկան խորհրդատվության որոշ խնդիրներ ավելի հեշտ կլինի լուծել:

Դերային մոտեցման կիրառման դեպքում այս մակարդակների էությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ անհատը կարող է պատրաստ լինել իրեն ներկայացվող դերային սպասումների մի մասին, սակայն տարբեր պատճառներով, ինչպիսիք են հիվանդությունը, որոշակի հմտությունների և ունակությունների թերի զարգացած լինելը, գիտելիքների սակավությունը, հոգեկերտվածքի որոշակի գծերը, ի վիճակի չլինել բավարարել մյուս սպասումները: Այս խնդրի լուծումը կարող է խթանիչ ազդեցություն ունենալ

միայնակ մարդկանց կյանքի, նրանց միայնության պատճառների հետազոտման վրա, այդպիսի մարդկանց քանակի պակասեցման հարցում, ինչն ունի ոչ միայն հոգեբանական, այլ նաև դեմոգրաֆիկ և քաղաքական նշանակություն:

Երրորդ գլխում դիտարկվում են նաև ծնողի և զավակի փոխհարաբերությունները ընտանիքում, բայց նույնպես դերերի տեսության տեսանկյունից: Ելնելով այսպիսի հետազոտական տեսանկյունից՝ մենք կարծում ենք, որ ոչ միայն ծնողն է սոցիալականացնում երեխային, այլ նաև երեխան ակամա ազդում է ծնողի սոցիալականացման ուղղվածության վրա, «սովորեցնելով» ծնողին մոր կամ հոր դերի արդյունավետ կատարմանը: Սոցիալականացման տվյալ ասպեկտը հայտնի է գիտությանը, սակայն թերի է ուսումնասիրված, և դերային մոտեցումը այստեղ կարող է կատարել դրական որոշիչ դեր: Դերերի կատարումը ինչպես ծնող-երեխա ուղղությամբ, այնպես էլ երեխա- ծնող ուղղությամբ, ունի ընտրական բնույթ: Հայրը տղային սոցիալականացնում է որոշակի ձևով («տղամարդ է դարձնում»), մինչդեռ դստեր հետ փոխներգործելիս նրա դերային վարքն ու սպասումները արմատական փոփոխություններ են կրում: (Այդ դեպքում նա «աղջիկ է մեծացնում»): Նույնը վերաբերում է նաև երեխաների մորը: Ծնողներն իրենց դերերը հարմարեցնում են տղայի և աղջկա դերերին, նրանց դերային սպասումներին, որոնք հաճախ պահանջների բնույթ են ընդունում: Դժվար չէ տեսնել, թե երեխաներն ինչքան հնարագետ են իրենց ծնողներին ցանկալի գործողությունների մղելու գործում:

Շարունակելով մենք առաջադրում ենք մի շարք դրույթներ ընտանեկան հարաբերություններում երեխաների և ծնողների դերային սոցիալիզացիայի վերաբերյալ: Կոնկրետացնելով այս մոտեցումը՝ մենք պնդում ենք, որ մոր և նորածին երեխայի առաջին հանդիպումը միաժամանակ նաև նրանց համապատասխան դերերի ծագման սկիզբն է, թեև մայրն, անշուշտ, նախանական որոշ պատկերացումներ ունենում է այն մասին, թե ինչպիսին է լինում նորածինը և ինչպիսին՝ մոր վարքը այդ առաջին հանդիպման ժամանակ: Բայց մի բան է վերացական պատկերացումը կամ ուրիշի փորձի մասին գիտելիքը, այլ բան է սեփական մայրական դերի ծնունդն ու սկզբնավորումը, ինչպես նաև հետագա զարգացումը: Իսկ երեխայի համար դա իսկապես նրա ներընտանեկան դերի ծննդյան սկիզբն է, քանի որ նա ոչ ընտանիքի և ոչ էլ սոցիալական դերերի մասին որևէ բնածին պատկերացում ունենալ չի կարող. նման բարդ հոգեբանական բովանդակությունները, ամենայն հավանականությամբ, չեն ժառանգվում: Այդ իսկ պատճառով իրավացի է այն արտահայտությունը, որ երեխան դարձնում է կնոջը մայր, իսկ տղամարդուն՝ հայր: Անհրաժեշտ է ավելացնել, որ երեխայի և ծնողի փոխադարձ սոցիալականացման ընթացքում ծնողների անձի կառուցվածքում առաջանում են նոր հոգեբանական ենթակառուցվածքներ, որոնց միջոցով են մոր և հոր սոցիալական դերերը: Այս գաղափարները առաջ քաշելիս մենք հիմնվել ենք նախորդ հետազոտողների մի շարք ձեռքբերումների վրա (Կ. Դանցիգեր, 1978 և ուրիշներ), ինչպես նաև մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքների վրա (Ս.Ա. Սեդրակյան, 1998 և ուրիշներ): Մենք համոզված ենք, որ ընտանիքում մայր-երեխա և հայր-երեխա փոխկապակցված դերերի ծագման ժամանակ փոխադարձ զիջումների շնորհիվ հարաբերությունները գրեթե լիովին կոորդինացված են դառնում, նման պարագայում կարող ենք ասել, որ երեխան և ծնողը հասել են միջդերային հարմարվածության վիճակի: Այդպիսով, երբ մարդկանց փոխհարաբերությունները բնորոշելիս ասում ենք, որ նրանք

փոխզիջման են հասել, ապա, որպես կանոն, նկատի ունենք նրանց փոխադարձ դերային հարմարվածությունը:

Երրորդ գլխի հետագա շարադրանքները նվիրված են ընտանեկան բախումների և ճգնաժամերի մանրամասն հետազոտմանը: Այստեղ դիտարկվում են կարևոր և ամենից հաճախ հանդիպող ընտանեկան ճգնաժամերի տեսակները (ամուսինների պահանջմունքների հիմնական տեսակներին համապատասխան), հստակ տարբերակված են բախումների մակարդակները, հատկապես ճգնաժամերի մակարդակները, որից հետո, կիրառելով դերային վերլուծություն, տրվում է դրանց դերային բնութագիրը: Դերային մոտեցումը թույլ է տալիս ավելի հստակ բացահայտել կոնֆլիկտային փոխազդեցության պատճառները և մեխանիզմները, դրանց փուլերը:

Սույն ատենախոսության մեջ առաջ են քաշվում մի շարք նոր գաղափարներ ընտանեկան ճգնաժամերի վերաբերյալ: Ելնելով դերային տեսությունից՝ մենք առաջարկում ենք ճգնաժամի մասին նոր պատկերացում: Մենք կարծում ենք, որ բախումը վերածվում է ճգնաժամի այն ժամանակ, երբ `

1) հակասության մեջ գտնվող պահանջմունքները կամ սպասումները արդեն ակտիվորեն հակադրվում, բախվում են իրար, 2) երբ դրանք՝ որպես կոնֆլիկտների իրական և շոշափելի բաղադրամասեր, անհամատեղելի են, 3) երբ բացասական հույզերը շատ ուժեղ և իռացիոնալ են դարձել, որի հետևանքով կողմերի վարքին հաղորդվել է իմպուլսային և ագրեսիվ բնույթ, 4) երբ կոնֆլիկտող կողմերը հասկանում են, որ այլևս այդպես ապրել չեն կարող, որ իրենք, որպես անձեր, անհամատեղելի են:

Ճգնաժամի այս հոգեբանական տեսությունը, որը, մեր կարծիքով, իր ամբողջության մեջ նոր է, կարելի է ուղղակիորեն կիրառել ընտանեկան կյանքում ծագող ճգնաժամերի ուսումնասիրության նպատակով: Բազմաթիվ ընտանիքներ իրենց գոյության ժամանակահատվածներում մեկ կամ մի քանի անգամ կարող են հայտնվել ճգնաժամային վիճակում: Պատահական չէ, որ ժամանակակից ընտանիքի հոգեբանության բնագավառում ընտանեկան ճգնաժամերի ուսումնասիրությանը մեծ նշանակություն է տրվում: Այն մասնագետները, որոնք ընտանեկան կոնֆլիկտներն ու ճգնաժամերն ուսումնասիրելիս չեն հենվում դերերի տեսության վրա, սովորաբար առաջադրում են ընտանեկան ճգնաժամի արտաքին նկարագրություն: Այսինքն՝ որպես նման վիճակի ցուցանիշներ վերցնում են դիտման համար մատչելի դրսևորումներ՝ անուշադրության մատնելով երևույթի բուն էությունը: Այդպես են բնութագրում ճգնաժամն ընդհանրապես, ընտանեկան ճգնաժամը՝ մասնավորապես:

Ընդհանրացնելով ընտանեկան ճգնաժամի մասին մեր հայեցակարգը՝ կարող ենք ավելացնել հետևյալը՝

1) ամուսինների միջև ճգնաժամ կարող է ծագել վերոհիշյալ հիմնական պահանջմունքներից և սպասումներից յուրաքանչյուրի չբավարարված մնալու դեպքում; 2) կոնֆլիկտներն ու ճգնաժամերն էլ ավելի սուր ու տանջալից են լինում, երբ դրանք ծագում են մեկից ավելի պահանջմունքների չբավարարված մնալու հետևանքով: Հետևաբար, մենք կարող ենք խոսել տարբեր բարդության կոնֆլիկտների և ճգնաժամերի հնարավորության մասին (առաջին, երկրորդ և երրորդ աստիճանի ճգնաժամեր): Սկզբունքորեն, որքան ցածր է կոնֆլիկտի բարդության աստիճանը, այնքան ավելի հեշտ է մեղմել կամ լուծել այն: Բարդ կոնֆլիկտները, որոնք ընդգրկում են չբավարարված երկու կամ ավելի պահանջմունքներ և դերային սպասումներ, շատ դժվար է լուծել; 3) Ճգնաժամն էլ

ավելի բարդ է դառնում, երբ դրանում ընդգրկվում են ոչ միայն հիմնական գործող անձինք (տվյալ դեպքում ամուսինները), այլև նրանց ռեֆերենտային խմբերը (օրինակ՝ ծնողների ընտանիքները); 4) Ներընտանեկան ճգնաժամը բարդ և ավերիչ է դառնում, երբ նրանում ընդգրկվում են նաև ընտանիքի այլ անդամներ, հատկապես երեխաները, այսինքն՝ երբ ընտանիքը տրոհվում է հակառակորդ ենթախմբերի:

Հիմք ընդունելով վերոշարադրված հայեցակարգը՝ կարող ենք արդյունավետ դիտարկման ենթարկել կոնկրետ ընտանիքներում ծագող իրական կոնֆլիկտներն ու ճգնաժամերը:

Ելնելով այս հայեցակարգից՝ մենք դիտարկում ենք գոյություն ունեցող կոնցեպցիաները ընտանեկան ճգնաժամերի վերաբերյալ (Ս. Կրատոխվիլ, 1991): Այստեղ առաջարկվում է նոր հայեցակարգ, համաձայն որի՝ պետք է առանձնացնել ճգնաժամերի երկու կարևոր տեսակներ՝ ելնելով նրանից, որ ամուսինների միջև կարող են առաջանալ մի շարք տարաձայնություններ և կոնֆլիկտներ, որոնցից մի մասը ուժգնանալով կարող է հասնել ճգնաժամի աստիճանի: Դրա մասին են վկայում կոնկրետ ճգնաժամերի նկարագրությունները:

Հիմնվելով այդ փաստերի վրա՝ մենք առաջարկում ենք առանձնացնել ճգնաժամերի երկու տեսակ կամ մակարդակ՝ 1) **պարզ ճգնաժամ**, որը հետևանք է միայն մեկ կոնֆլիկտի զարգացման, 2) **բարդ համալիր ճգնաժամ**, երբ ամուսինների փոխհարաբերություններում միաժամանակ սրվել, խորացել և ճգնաժամի բնույթ են ստացել մեկից ավելի կոնֆլիկտներ: Անշուշտ, բարդ ճգնաժամերն էլ տարբեր ենթամակարդակներ են ունենում՝ կախված այն բանից, թե քանի կոնֆլիկտ և անհամաձայնություն է ծագել կողմերի միջև: Դրանք բազմաչափ կոնֆլիկտներ և ճգնաժամեր են: Ընդ որում, որքան ավելի մեծաթիվ են ճգնաժամի բարդույթի մեջ մտնող կոնֆլիկտները, այնքան ավելի դժվարին են դառնում ստեղծված վիճակը և նրանից դուրս գալու ուղիների որոնումը:

Ելնելով մեր կողմից առաջարկված ճգնաժամերի դերային հայեցակարգից՝ մենք դիտարկում ենք որոշ հեղինակների կողմից առաջ քաշված ճգնաժամերի և դրանց տեսակների մասին գաղափարները (Ս. Մինուխին, 1998; Ջ. Հեյլի, 2000; է.Գ. էյդեմիլլեր և Վ.Վ. Յուստիցկիս, 2008): Հատկապես մանրամասն և քննադատորեն ենք դիտարկում նորմատիվ և ոչ նորմատիվ ճգնաժամերի մասին պատկերացումները (այս ճգնաժամերը մանրամասն նկարագրված են Ն.Ի. Օլիֆերովիչի և համահեղինակների գրքում, 2008):

Հաշվի առնելով գրականության մեջ նորմատիվ և ոչ նորմատիվ ճգնաժամերին տրվող բնութագրերի նկարագրական և ոչ հստակ բնույթը՝ մենք դրան տալիս ենք դերային վերլուծություն, որն էլ ներկայացված է երրորդ գլխի երեք ենթագլուխներում:

Ընտանեկան նորմատիվ ճգնաժամեր: Ջ. Հեյլիի կողմից նկարագրված բոլոր 7 ճգնաժամերի տեսակները ենթարկվում են դերային վերլուծության: Այդ տեսակները նա առանձնացրել է՝ հիմնվելով է. Էրիքսոնի (2002) տարիքային ճգնաժամերի հայտնի հայեցակարգի վրա: Դերային վերլուծությունը թույլ է տվել մեզ ցույց տալ, որ Ջ. Հեյլիի կողմից նկարագրված ճգնաժամերի որոշ մասը, ըստ էության, դերային են, իսկ մնացածները պարունակում են դերային հակադրություններ և դերերի ընդունման գործընթացների այլ խանգարումներ: Մեր քննադատական դիտողությունների և նոր գաղափարների հաստատման նպատակով մենք բերում ենք տեղեկություններ ընտանեկան հոգեթերապիայի

մեր սեփական պրակտիկայից: Մեր կողմից ավելի մանրամասն վերլուծված է դեռահասության շրջանի ճգնաժամը, որի արդյունքում հնարավոր է դառնում ցույց տալ, որ այն առավելապես դերային բնույթ է կրում: Դրանք այն դերերի բախումներն են, որոնք դեռահասը կատարում է այս տարիքային խմբի իր ռեֆերենտային խմբերում՝ ընտանիքում, հասակակիցների խմբում: Դեռահասը կարող է կոնֆլիկտ ունենալ այն կապակցությամբ, որ սկսում է կամա թե ակամա, ապաիդեալականացնել ծնողներին: Սակայն դա չի կարելի անվանել դերային բախում կամ կոնֆլիկտ ընդհանրապես:

Դերային տեսության տեսանկյունից նորմատիվ ճգնաժամերի հետազոտման արդյունքում մենք ստանում ենք լրացուցիչ փաստարկներ ներընտանեկան փորձի և սոցիալիզացիայի տրանսֆերի մասին մեր հայեցակարգի օգտին: Մեր եզրակացությունն այն է, որ յուրաքանչյուր նոր ամուսնական զույգ հակված է տեղափոխել իր նոր ընտանիքի մեջ կապերի և փոխազդեցությունների այն փորձը, որի ականատեսներն ու մասնակիցներն են հանդիսացել ամուսինները իրենց ծնողների ընտանիքներում: Ինչպես տեսնում ենք այս մասնավոր դեպքում փորձը մեկ ընտանիքից տեղափոխվում է մեկ այլ ընտանիք:

«Նորմատիվ» դերերի վերլուծության կապակցությամբ մեր կողմից դիտարկվում են մի շարք նոր կամ թերի հետազոտված խնդիրներ:

Ոչ նորմատիվ ճգնաժամեր: Երրորդ գլխում մենք փորձել ենք կիրառել դերային մոտեցումը ոչ նորմատիվ ճգնաժամերը վերլուծելու համար, այսինքն՝ այն ճգնաժամերը, որոնք օրինաչափ չեն նորմալ ընտանիքի կյանքում: Այդպիսի ճգնաժամեր են համարվում կրկնամուսնությունը, ամուսնական անհավատարմությունը, ամուսնալուծությունը, ամուսիններից մեկի ծանր հիվանդությունը, արյունապղծությունը և ընտանիքի անդամներից մեկի մահը: Մինչ այժմ այս ճգնաժամերը միայն նկարագրված են եղել, այնպես որ դրանց ավելի խորը սոցիալ-հոգեբանական վերլուծությունը ընտանիքի մասին գիտության հասունացած խնդիր է: Սակայն մեկ աշխատության մեջ հնարավոր չէ մանրամասն հետազոտել այս բոլոր երևույթները, այդ իսկ պատճառով մեր վերլուծությունը հակիրճ է և հիմնականում վերաբերում է կրկնամուսնությանը, ամուսնական անհավատարմությանը և ամուսնալուծությանը:

Կրկնամուսնության վերաբերյալ մենք պնդում ենք, որ հիմնական խնդիրներն են դերերի անորոշությունը, նոր դերի կատարման հետ կապված խնդիրները, նոր ընտանիքում դերային հարաբերությունների հաստատումը և բախումները նվազագույնի հասցնելը և՛ քանակությամբ, և՛ բովանդակությամբ, սրության աստիճանով, և՛ հուզականությամբ: Ամենաբարդ խնդիրը, որը ծագում է ամուսինների միջև, դա «ծնող-զավակ» նորմալ հարաբերությունների հաստատումն է այն երեխաների հետ, որոնք ծնվել են նախորդ ընտանիքում: Այստեղ մենք մանրամասն դիտարկում ենք այն լրացուցիչ խնդիրներն ու դժվարությունները, որոնք առաջանում են այդ նոր ընտանիքներում այն դեպքում, երբ ամուսիններն ունեն երեխաներ՝ ծնված նախորդ ամուսնության ժամանակ:

Ամուսնական անհավատարմության վերաբերյալ մեր տեսակետը հիմնվում է այն գաղափարի վրա, որ այս երևույթը **փոխադարձ կախում ունեցող ամուսնական դերերի կատարման խանգարում է**: Եթե ամուսիններից մեկը կատարում է «ամուսնական» դերը ոչ իր ամուսնու հետ, ապա իր դերը ընտանիքում աղավաղվում է, դերի կատարումը խանգարվում է: Քրիստոնեական ժողովուրդների մենամուսնական ամուսնության համար հավատարմությունը խիստ կանոն և էքսպեկտացիա է: Սակայն այս կանոնը ավելի խիստ է գործում

կանանց համար, ինչը ստեղծում է որոշակի անհավասարություն իրավունքների և ազատության առումով: Ամուսնական անհավատարմության պատճառների հակիրճ նկարագրությունից հետո մենք անդրադառնում ենք այն հարցին, թե ինչ փոփոխություններ են տեղի ունենում դերային հարաբերություններում ամուսիններից մեկի դավաճանության դեպքում, եթե այդ փաստը հայտնի է դառնում ընտանիքի անդամներին, այդ թվում նաև երեխաներին: Պարզվում է, որ ամուսինների անհավատարմությունը, որպես դերային վարքի խանգարում, չի կարող մնալ մեկուսացված, որպես մի երևույթ, որը վերաբերում է միայն ամուսինների հարաբերություններին, այլ տարածվում է ընտանիքի ողջ դերային **կառուցվածքի** և **փոխհարաբերությունների** վրա:

Երրորդ գլխում նաև ուսումնասիրվում է ախտածին ընտանեկան դերերի հիմնախնդիրը: Այդպես են կոչվում այն ընտանեկան դերերը, որոնք բերում են ընտանիքի ամդամների մոտ ախտաբանական երևույթների առաջացմանը:

Չորրորդ գլխում դիտարկվում է եսասիրությունը և հոգեկան տհասությունը՝ որպես ընտանեկան կոնֆլիկտների պատճառներ: Բացատրվում է եսասիրության և եսակենտրոնության միջև եղած տարբերությունը (ընդ որում, հղում է կատարվում Ժ. Պիաժեի հետազոտություններին): Մենք առաջ ենք քաշում նոր գաղափար այն մասին, որ եսասիրության և եսակենտրոնության զուգորդությունը ընտանեկան կոնֆլիկտների ծագման շատ նպաստավոր նախապայման է: Մենք ենթադրում ենք, որ երիտասարդ ընտանիքներից շատերը քայքայվում են հենց ամուսինների սոցիալ-հոգեբանորեն հասուն չլինելու (տհասության) պատճառով:

Մենք դիտարկում ենք նաև ընտանեկան բախումների առաջացման այնպիսի լուրջ պատճառներ, ինչպիսիք են չգիտակցված դրդապատճառները, կարգավիճակների տարբերությունները, ամուսինների միջև լիդերության համար պայքարը և այլն: Այստեղ նախանշվում է ընտանեկան հարաբերությունների և բախումների պատճառների հոգեբանական հետազոտման նոր ուղղություն:

Չորրորդ գլխի մնացած ենթավերնագրերը նվիրված են սերտ կապված երկու խնդիրներին՝ ամուսնալուծության և դրա հետևանքով առաջացող խնդիրներին, և անոմալ ընտանիքներին ու այստեղ առաջացող հոգեբանական խնդիրներին: Մեր կողմից մանրամասն դիտարկվել են ամուսնալուծության պատճառները, ընտանիքի համար ամուսնալուծության վտանգի ֆենոմենը, ամուսինների դերային վարքի սոցիալական վերահսկման երևույթը, միայնակ մարդկանց հիմնախնդիրը և հոգեբանորեն անբարենպաստ ընտանիքների կյանքի այլ կողմերը, ինչպես նաև ամուսնալուծության հետևանքներն ու ամուսնալուծության ռիսկը, որի գլխավոր գործոնն է դերային համատեղելիություն-անհամատեղելիությունը: Բոլոր այս հարցերի ուսումնասիրության ժամանակ կիրառվում է դերային մոտեցումը:

Ինչպես դժվար չէ նկատել, այստեղ մենք փաստորեն պահանջում ենք երևույթի (տվյալ դեպքում՝ ամուսնալուծության) պատճառներն ու պայմանները տարբերել իրարից և պատճառական բացատրություններ գտնելու փորձ ենք կատարում: Հենց դերային հարմարվածություն - անհարմարվածություն համապատասխանաբար, «առանցքների» վրա էլ պետք է փնտրել ընտանիքի ամրության կամ թուլության ու քայքայման բացատրությունը:

Հինգերորդ՝ «Ընտանիքի սոցիալ-հոգեբանական և սոցիալ-դերային առանձնահատկությունները բացահայտող գործոնների ուսումնասիրումը» գլխում հետազոտվել են ընտանիքի սոցիալ-հոգեբանական և սոցիալ-դերային առանձնահատկությունները բացահայտող գործոնները, որտեղ տեսական շարադրանքի հիմնական դրույթները հիմնավորվում են մի շարք մեթոդների կիրառմամբ՝ փորձարարական հետազոտությունների միջոցով ստացված արդյունքներով:

Այսպես՝ «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան թույլ է տվել որոշել ամուսինների պատկերացումները ընտանեկան դերերի բաշխման վերաբերյալ: Ընտանեկան գործառույթների իրականացման ժամանակ ամուսնու և կնոջ դերերի բաշխման վերաբերյալ պատկերացումները միավորված են դերային սպասումների և հավակնությունների սանդղակում:

Դիագրամ 1-ում և 2-ում ներկայացված են հետազոտված ընտանիքներում ամուսինների սպասումների և հավակնությունների համեմատական վերլուծությունը հետևյալ հինգ ոլորտներում. տնտեսա-կենցաղային, ծնողական-դաստիարակչական, սոցիալական ակտիվության, հոգեթերապևտիկ, արտաքին գրավչության:

Ընտանեկան գործառույթների իրագործման ժամանակ անձի կողմնորոշումը զուգընկերոջ ակտիվ դերային վարքի նկատմամբ «դերային սպասումներ» են և անձի կողմնորոշումը սեփական դերային վարքի նկատմամբ՝ «դերային հավակնություններ»:



Դիագրամ 1. Հարցման ենթարկված կանանց սպասումների և հավակնությունների միջին ցուցանիշները ըստ վերոհիշյալ հինգ ոլորտների (n = 240):



Դիագրամ 2. Հարցման ենթարկված տղամարդկանց սպասումների և հավակնությունների միջին ցուցանիշները ըստ վերոհիշյալ հինգ ոլորտների (n = 240):

Համեմատելով կանանց և տղամարդկանց սպասումների և հավակնությունների միջին ցուցանիշները՝ կարող ենք ասել, որ ընտանիքի վերոհիշյալ ոլորտներում ցածր ցուցանիշներ չեն գրանցվել, ստացված տվյալները միջին և բարձր արժեքների տիրույթում են:

Համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ կանանց գնահատականը դերային սպասումների սանդղակով տնտեսական – կենցաղային ոլորտում զիջում են տղամարդկանց սպասումների ցուցանիշներին, որոնք միջինից բարձր չեն: Այսինքն ժամանակակից հայ կանանց պահանջները զուգընկերոջ նկատմամբ կենցաղը կազմակերպելու առումով մեծ չէ, և նրանք մեծ նշանակություն չեն տալիս զուգընկերոջ տնտեսակենցաղային հմտություններին և հնարավորություններին: Դերային հավակնությունների ցուցանիշները արտացոլում են սեփական ակտիվ գործունեության դիրքորոշումը ընտանեկան տնտեսությունը վարելուց, ընդ որում կանանց ցուցանիշները բարձր են, քան տղամարդկանցը, ինչը ևս բնորոշ է հայ իրականությանը: Կարելի է ասել, որ դարեր ի վեր հայ ընտանիքում տնտեսությունը կազմակերպել ու վարել են հիմնականում կանայք: Այս դիրքորոշումները կարծես ենթագիտակցորեն պահպանվել են, որի հետևանքով տղամարդկանց հավակնությունները տնտեսությունը վարելուց կանանց համեմատ բավական ցածր է: Ծնողական պարտականությունների նկատմամբ ամուսինների ունեցած սպասումների և հավակնությունների ցուցանիշները հետևյալներն են. երեք ենթախմբերում կանանց սպասումները զուգընկերոջ ակտիվության ծնողական դիրքի նկատմամբ, ինչպես նախորդ սանդղակում, ցածր են ամուսինների ունեցած

սպասումներից: Այսինքն՝ կանայք ամուսիններից մեծ սպասումներ չունեն երեխաների զբոսանքի, խաղի և դաստիարակման հետ կապված: Սակայն դերային հավակնությունների ենթասանդղակը, որը արտացոլում է փորձարկվողների կողմնորոշման աստիճանը սեփական պարտականությունների նկատմամբ երեխաների դաստիարակության հարցում, թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց մոտ համեմատաբար բարձր է: Հայ իրականությանը գրեթե միշտ բնորոշ են եղել երեխայակենտրոն ընտանիքները: Երեխաների նկատմամբ ծնողների բարձր պատասխանատվությունը, հոգատարությունը, կապվածությունը և սերը ընկած են այս դիրքորոշումների հիմքում: Պետք է ասել, որ ավանդաբար երեխաների դաստիարակությամբ զբաղվել է կինը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ժամանակակից ընտանիքներում տղամարդիկ մեծ ակտիվություն են դրսևորում այդ ոլորտում: Տղամարդկանց հավակնությունների ցուցանիշները գերազանցում են կանանց տվյալներին:

Դերային սպասումները չափող ենթասանդղակի պատկերը նման է նախորդներին: Փորձարկվող կանանց կողմնորոշման աստիճանը, որ ամուսնական զուգընկերը պիտի ունենա լուրջ մասնագիտական հետաքրքրություններ, կատարի ակտիվ հասարակական դեր՝ բարձր է, քան տղամարդկանց մոտ: Այսինքն տղամարդիկ այնքան էլ չեն կարևորում կնոջ դերը ընտանիքից դուրս, առաջնային չեն համարում նրա մասնագիտական և աշխատանքային հետաքրքրությունները: Դերային հավակնությունների ենթասանդղակը ցույց է տալիս փորձարկվողների անձնական մասնագիտական պահանջմունքները: Այստեղ անվերապահորեն գրանցվել են բարձր ցուցանիշներ: Համաձայն ստացված արդյունքների՝ կարելի է ասել, որ հարցմանը մասնակցած կանայք և տղամարդիկ ունեն դրական դիրքորոշում մասնագիտական, աշխատանքային գործունեության նկատմամբ և գտնում են, որ անձը պետք է ունենա ընտանեկան հետաքրքրություններին զուգահեռ նաև մասնագիտական հետաքրքրություններ: Ժամանակակից հասարակությանը, այդ թվում հայ հասարակայնությանը բնորոշ առանձնահատկություններից մեկը կնոջ հասարակական ակտիվության բարձր ցուցանիշներն են:Հետազոտությունը ցույց է տալիս, որ այս ոլորտում կնոջ հավակնությունները համեմատաբար բարձր են, քան տնտեսակենցաղային ոլորտում, քանի որ կանայք շարունակաբար ձգտում են հասարակական նոր և բարձր կարգավիճակի: Սա խոսում է վերջին ժամանակաշրջանում կնոջ նոր սոցիալական տիպի ձևավորման մասին: Տղամարդկանց սպասումների ցուցանիշները առավելապես պայմանավորված են կարծրատիպերով, որը դրսևորում է «Կնոջ գլխավոր հոգսը ընտանիքն է» գաղափարը:

Հաջորդը հուզական գործառույթի դերային սպասումներ ենթասանդղակն է, որի ցուցանիշները ամենաբարձրն են: Այս գործառույթը բնորոշ է ժամանակակից ընտանիքներին, այլ կերպ ասած՝ համեմատաբար ժամանակակից գործառույթ է: Ընդ որում ինչպես ցույց է տալիս հետազոտական տվյալների վերլուծությունը, այն ամենաբարձրն է ամուսինների սպասումներում. թե' կանայք, թե' տղամարդիկ կարծում են, որ ամուսնական զուգընկերը կվերցնի իր վրա ընտանիքի հուզական լիդերի դերն այնպիսի հարցերում, ինչպիսիք են հոգեբանական մթնոլորտի

շտկումը, բարոյական և հոգեբանական, հուզական օժանդակության ցուցաբերումը, «հոգեթերապևտիկ մթնոլորտի» ստեղծումը: Դերային հավակնությունների ենթասանդղակի ցուցանիշները ցույց են տալիս, որ փորձարկվող կանայք, ավելի քան տղամարդիկ, ձգտում են ընտանիքում լինել հոգեթերապևտ: Տղամարդկանց ցածր ցուցանիշները ևս արդյունք են այն ավանդույթների, ազգային դիրքորոշումների, որոնք՝ որպես կարծրատիպեր, ամրագրված են նրանց գիտակցականում՝ «Ընտանեկան ջերմ մթնոլորտ ստեղծողն ու պահպանողը կինն է»:

Արտաքին հրապուրանքի սանդղակը արտացոլում է արտաքին տեսքի նկատմամբ դիրքորոշումը, համապատասխանությունը նորաձևության ստանդարտներին, որը ներկայացված է հիմնականում միջին և ցածր ցուցանիշներով: Կանանց դերային սպասումները և դերային հավակնությունները գերազանցում են տղամարդկանց գնահատականներին: Սակայն ցանկությունը ունենալ արտաքնապես գրավիչ զուգընկեր ավելի մեծ է, քան դիրքորոշումը սեփական գրավչության նկատմամբ, ձգտումը նորաձև և գեղեցիկ հագնվել:

Ինչպես երևում է դիագրամ – 1 և դիագրամ – 2– ից կանանց ամենաբարձր և ամենացածր ցուցանիշները սպասումների սանդղակում գրանցվել են համապատասխանաբար հուզական հոգեթերապևտիկ ոլորտում (M = 8.35; $\sigma = 0.95$) և տնտեսակենցաղային ոլորտում (M = 5.50; $\sigma = 1.72$): Իսկ հավակնությունների սանդղակում ամենաբարձր և ամենացածր ցուցանիշները համապատասխանում են սոցիալական ակտիվության (M = 7.73; $\sigma = 1.30$) և արտաքին գրավչության ոլորտներում (M = 6.68; $\sigma = 1.79$):

Տղամարդկանց ամենաբարձր և ամենացածր ցուցանիշները սպասումների սանդղակում գրանցվել են համապատասխանաբար հուզական հոգեթերապևտիկ ոլորտում (M = 8.27; $\sigma = 1.10$) և տնտեսակենցաղային ոլորտում (M = 6.40; $\sigma = 2.04$): Իսկ հավակնությունների սանդղակում ամենաբարձր և ամենացածր ցուցանիշները համապատասխանում են սոցիալական ակտիվության (M = 7.68; $\sigma = 1.51$) և տնտեսակենցաղային (M = 5.20; $\sigma = 1.16$) ոլորտներին:

«Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան թույլ է տալիս որոշել նաև ընտանիքում միջանձնային փոխհարաբերությունների հինգ ոլորտներում ամուսնական զույգի դերային համապատասխանության աստիճանը: Ամուսնու դերային համապատասխանությունը հավասար է կնոջ դերային հավակնությունների գնահատականի և ամուսնու դերային սպասումների գնահատականի տարբերությանը: Համապատասխանաբար կնոջ դերային համարժեքությունը հավասար կլինի միավորների տարբերությանը, որոնք բնութագրում են ամուսնու դերային հավակնությունները և կնոջ դերային սպասումները: Որքան փոքր է տարբերությունը, այնքան բարձր է զուգընկերների դերային համապատասխանությունը:

Դիագրամ 3–ում ամփոփ ներկայացված է կանանց սպասումները և տղամարդկանց հավակնությունները, որոնց համեմատումը հնարավորություն կտա պատկերացում կազմելու կանանց դերային համապատասխանության մասին.



Դիագրամ 3. Կանանց դերային համապատասխանության ցուցանիշները (n=480):

Համաձայն հետազոտության տվյալների՝ սոցիալ – տնտեսական ոլորտում կանանց սպասումները բարձր են, քան տղամարդկանց հավակնությունները, ըստ որի, կանայք գտնում են, որ ամուսնու ամենագլխավոր հոգսը ընտանիքի նյութական բարիք և կենցաղային հարմարավետություն ստեղծելն է: Նա պետք է զբաղվի տնային տնտեսությամբ կնոջ հետ հավասարապես և կարողանա սպասարկել ինքն իրեն, այլ ոչ թե սպասի, որ կինը իր վրա վերցնի բոլոր հոգսերը: Տղամարդկանց հավակնությունները այնքան էլ մեծ չեն կնոջ հետ կիսելու տնային գործերը:

Հետաքրքիր ցուցանիշներ են արձանագրվել ծնողա-դաստիարակչական գործառույթի իրականացման շուրջ: Տղամարդկանց չափազանց բարձր հավակնությունների շնորհիվ իջել է կանանց ադեկվատությունը այս ոլորտում, բարձրացել՝ տղամարդկանց ադեկվատությունը: Ժամանակակից ընտանիքներում տղամարդիկ միտված են երեխաների դաստիարակության հարցում ունենալ առավել մասնակցություն, ինչը այնքան էլ նրանցից չեն սպասում կանայք:

Սոցիալական ակտիվության նկատմամբ բարձր են կանանց սպասումների ցուցանիշները: Նրանք կարծում են, որ տղամարդը պետք է լինի եռանդուն և գործունյա, լուրջ, կլանված իր աշխատանքով կամ սեփական գործերով: Այս կանանց համար կարևոր է, թե ինչպես են գնահատում ամուսնու գործնական և մասնագիտական որակները աշխատավայրում: Սոցիալական ակտիվության բարձր հավակնություններ ունեցող տղամարդիկ ձգտում են դառնալ լավ մասնագետ, նրանք հպարտանում են, երբ արժևորվում են նրանց մասնագիտական որակները և մասնակցում են պատասխանատու ու դժվարին գործերի:

Ինչպես երևում է դիագրամում, հուզական - հոգեթերապևտիկ գործառույթի իրագործման նկատմամբ կանանց սպասումները գերազանցում են տղամարդկանց հավակնություններին: Գրեթե բոլոր կանայք և տղամարդիկ գտնում են, որ իրենց զուգընկերը պետք է կարողանա ընտանիքում ստեղծել ջերմության և վստահության մթնոլորտ, լինի ուշադիր և հոգատար կնոջ կամ ամուսնու ապրումներին և տրամադրությանը: Եվ որ շատ կարևոր է, հասկանա կողակցին և ընդունի այնպիսին, ինչպիսին որ նա կա: Սակայն նրանց մոտ այնքան էլ բարձր չէ հավակնությունների մակարդակը՝ ընտանեկան հոգեթերապևտիկ լիդերը դառնալու: Այդ իսկ պատճառով այս ոլոլորտում ևս առկա են դերային անհամապատասխանություններ կանանց մոտ:

Ըստ կանանց սպասումների հետազոտական տվյալների՝ կանայք գտնում են, որ իրենց ամուսինը պետք է նորաձև և գեղեցիկ հագնված լինի, նա պետք է ուշադիր լինի իր տեսքին, որ հաճելի լինի բոլորին: Ի տարբերություն կանանց սպասումների՝ գրավիչ լինելու հավակնությունների տղամարդկանց ցուցանիշները ցածր են:



Դիագրամ 4. Տղամարդկանց դերային համապատասխանության ցուցանիշները (n=480):

Այլ է պատկերը տղամարդկանց սպասումների հարցում: Որքան էլ տղամարդիկ գտնում են, որ կինը նախ և առաջ լավ տնտեսուհի պետք է լինի, որ նրա գլխավոր հոգսը ընտանիքում բոլորի խնամված և կերակրված լինելն է, այնուամենայնիվ, այդ սպասելիքները զիջում են կանանց հավակնություններին, նրանց ակտիվությանը: Կանայք ունեն ավելի բարձր հավակնություններ, ձգտում են լինել լավ տնային տնտեսուհի և համարում են, որ ընտանիքում բոլորի խնամված և կերակրված լինելու հոգսը իրենցն է:



Դիագրամ 5. Դերային համապատասխանության և անհամապատասխանության միջին ցուցանիշները հինգ ոլորտներում երեք ենթախմբերում (n=240):

Հավելում՝ *1. տնտեսա-կենցաղային ոլորտ, 2. ծնողական դաստիարակչական ոլորտ, 3. սոցիալական ակտիվության ոլորտ, 4. հուզական հոգեթերապևտիկ ոլորտ, 5. արտաքին գրավչության ոլորտ:*

Քանի որ հետազոտված բոլոր ընտանիքներում առկա է դերային անհամապատասխանություն, հետևաբար ստացված ցուցանիշները զրոյից բարձր են: Որքան ցուցանիշը բարձր է, այնքան համապատասխանությունը ցածր է:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ժամանակակից հասարակարգում ընտանիքներին բնորոշ առանձնահատկություններից մեկը ամուսնական զույգի դերային անհամապատասխանությունն է: Հարցման ենթարկված բոլոր ընտանիքներում առկա է կա՛մ կնոջ, կա՛մ ամուսնու, կա՛մ երկուսի միաժամանակ դերային անհամապատասխանություն առնվազն մեկ ոլորտում դերային պարտականությունները իրագործելիս: Այն կանայք և տղամարդիկ, որոնց մոտ բարձր է դերային անհամապատասխանության ցուցանիշը, ունեն հակադիր սպասումներ իրենց զուգընկերոջ հավակնություններին:

Բոլոր դերերը, որոնք ձեռք են բերվում ընտանիքում անձի կողմից, ընտանիքի մյուս անդամների մոտ առաջացնում են որոշակի ակնկալիքներ, սպասումներ այդ դերերի իրականացման նկատմամբ: Ամուսինների նոր դերերի տեխնոլոգիայի համարժեք իրագործումը հիմնականում պայմանավորված է ամուսինների ընտանեկան արժեքների համատեղելիությամբ: Դերը ստանձնած անձը՝ ամուսինը կամ կինը, ելնելով հայրական ընտանիքից, արժեքային կողմնորոշումից, անձնական փորձից, ունենում են արդեն որոշակիացված պատկերացումներ իրենց անհրաժեշտ ու սպասվող դերային վարքագծի մասին:

Ժամանակակից ընտանիքներում ի հայտ են եկել շեշտված հակասություններ դերային պահանջների և դրանց իրականացման

ցանկությունների միջև, որը պայմանավորված է նաև հասարակական հարաբերությունների ոչ էվոլյուցիոն, թռիչքաձև փոփոխություններով, որոնք նպաստել են ոչ միայն ընտանիքի կառուցվածքային փոփոխությունների առաջացմանը, այլև ընտանիքի անդամների կյանքում սերմանել են հոգեբանական, սոցիալ – հոգեբանական փոփոխություններ, ինչու չէ, նաև դերային վարքագծի փոփոխություններ: Այս դերային անհամապատասխանությունը նաև պայմանավորված է այն դիրքորոշումներով, որ ձևավորվել են հասարակական փոխակերպումներով:

Ժամանակակից ընտանիքներում ամուսինները ունեն և' էգալիտար, և' ավանդական ընտանիքներին բնորոշ նորմեր, արժեքներ և դերային համակարգերի տարրեր: Ժամանակակից ընտանիքի դերային համակարգի փոխակերպումը (տրանսֆորմացիան) արդյունք է այն բանի, որ ընտանիքը, լինելով սոցիալական ինստիտուտ, նրանում առկա ենթահամակարգերը և դրանց փոխակերպումները անպայմանորեն առնչվում են հասարակական կարգերի հետ: Եվ ճիշտ է այն միտքը, որ յուրաքանչյուր հասարակարգ ունի իրեն բնորոշ ընտանեկան դերային համակարգը: Անցումային հասարակարգին բնորոշ է ընտանեկան դերային համակարգի միջանկյալ ձևը. ավանդականից՝ էգալիտարի:

Ըստ «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի հեղինակների՝ յուրաքանչյուր ոլորտի ու չափի անհամապատասխանությունը չէ, որ կարող է սպառնալիք դառնալ ընտանեկան հարաբերությունների սրացմանը, քանի որ պատճառը միայն ընտանեկան արժեքների անհամաձայնությունը չէ, որովհետև կան դերային անհամապատասխանությամբ ամուսանական զույգեր, որոնց մոտ արժեքային լիարժեք համապատասխանություն կա: Այս դերային անհամապատասխանությունը պայմանավորված է մասամբ նրանով, որ ամուսինները չեն կարողանում համակարգել իրենց գործողությունները, ճկուն չեն ընտանեկան գործառույթներ իրագործելիս:

Մեթոդիկայի հետագա մանրակրկիտ վերլուծությունը, որն իրենից ներկայացնում է ամուսիններից յուրաքանչյուրի վերոհիշյալ ոլորտների ցուցանիշների ինտեգրումը, թույլ տվեց մեզ առանձնացնելու դերային համապատասխանությամբ ու անհամապատասխանությամբ ընտանիքների հետևյալ տոկոսային հարաբերակցությունը.



Դիագրամ 6. Դերային համապատասխանությամբ և անհամապատասխանությամբ ընտանիքների տոկոսային հարաբերակցությունը (n = 480):

Համաձայն դիագրամ 6 - ի 31.67% ընտանիքներ համարվում են դերային համապատասխանությամբ ընտանիքներ, որտեղ ամուսնական զույգի դերային անհամապատասխանությունը չի գերազանցում նորմատիվ սահմանը: Այստեղ ամուսինները համեմատաբար ըմբռնում են իրենց պարտականությունները, պատասխանատու են դրանց իրագործման համար և գործառույթների իրագործման ժամանակ ձգտում են համաձայնության: Իսկ 68.33% ընտանիքների մոտ առկա դերային անհամատեղելիությունն անցնում է նորմատիվ սահմանը (ցուցանիշների տարբերությունը գերազանցում է երեք միավորը):

«Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան թույլ է տալիս որոշել նաև զուգընկերների պատկերացումները ընտանիքում սեքսուալ հարաբերությունների, ամուսնու և կնոջ անձնային ընդհանրությունների, ծնողական պարտականությունների, մասնագիտական հետաքրքրությունների, տնտեսա-կենցաղային ոլորտի, բարոյական – հուզական օժանդակության, արտաքին հրապուրանքի կարևորության և նշանակության մասին:

Եզրակացություններ

Ընտանեկան հարաբերություններին սոցիալ-դերային մոտեցումը նոր հետազոտական ուղղություն է ընտանիքի հոգեբանության մեջ: Ընտանեկան կյանքի խնդիրներին դերային մոտեցման կիրառումը, ընտանեկան խմբային դինամիկայի դերային վերլուծությունը արդյունավետ է և թույլ է տալիս բացահայտել ներընտանեկան փոխհարաբերությունների, ինչպես նաև այլ սոցիալական խմբերի և հասարակության հետ ընտանիքի փոխհարաբերությունների նոր կողմեր: Այսպիսի մոտեցումը բացահայտում է ընտանեկան դինամիկայում այնպիսի սոցիալ-հոգեբանական երևույթներ, որոնք մինչ այժմ կա՛մ չէին հետազոտվել, կա՛մ հետազոտվել են մակերեսորեն. մասնավորապես պարզվեց, որ ցանկացած ընտանիք որոշակի կարգավիճակների և դերերի համակարգ է, որտեղ սոցիալական սպասումները փոխկապակցված են և ընտանեկան դերերի մասին գիտելիքների փոխանցումը նպաստում է երեխայի մոտ դերային պատկանելիության գիտակցման բարձրացմանը: Ընտանեկան կյանքն ուսումնասիրող հոգեբանների նախորդ աշխատություններում, անշուշտ, հանդիպում ենք կցկտուր գաղափարների ընտանիքի անդամների սոցիալական դերերի և դերային փոխներգործության վերաբերյալ, սակայն ընտանեկան կյանքի հիմնական ասպեկտների վերաբերյալ մինչ այժմ իրականացված չի եղել հետևողական սոցիալ-դերային մոտեցում: Մեր ատենախոսության գլխավոր առանձնահատկությունն է ընտանիքի բոլոր հիմնական խնդիրների նկատմամբ դերային դիրքորոշման հետևողական իրականացումը: Կարծում ենք, որ ընտանեկան կյանքի ընդհանուր սոցիալ-հոգեբանական տեսության մեջ **դերային մոտեցումը** ունի առանցքային նշանակություն:

Մեր կողմից կատարած ընտանեկան կյանքի հոգեբանության հանգուցային խնդիրների սոցիալ-դերային հետազոտությունը թույլ է տալիս մեզ կատարել հետևյալ **եզրակացությունները՝**

1.Մեր կողմից հաստատվեց դերային հարաբերությունների, ընտանեկան սոցիալականացման ոճի, ընտանիքի կառավարման ոճի դեպի այլ խմբեր (ծնողական ընտանիքում մեծացող անդամների կողմից ստեղծվող ընտանիք),

ինչպես նաև լայն հասարակություն՝ կազմակերպություններ, պետական կառավարման մարմիններ, տրանսֆերի (տեղափոխման) վարկածը: Գոյություն ունեցող էմպիրիկ նյութի վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել, որ այս գործընթացը, որը հաճախ լատենտ է, և հետևաբար, չգիտակցված, իսկապես գոյություն ունի:

2.Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ գոյություն ունի ընտանեկան կյանքի փոփոխության տրանսֆերի երկու տեսակ՝ **դրական**, որի դեպքում դերային և այլ հարաբերությունները, մարտավարությունները և հարմարման միջոցները նոր խմբերում պահպանվում են գրեթե առանց փոփոխությունների, և **բացասական,** որի դեպքում բոլոր այդ ոճերը, հարաբերությունները և հարմարման միջոցները փոխարինվում են իրենց հակոտնյաներով: Մենք կարծում ենք, որ տեղափոխման (սոցիալ-հոգեբանական և դերային տրանսֆերի) այս երկու ենթատեսակների տարբերակումը թույլ է տալիս բացատրել մի ամբողջ շարք սոցիալ-հոգեբանական երևույթներ, որոնք թեև հայտնի են, բայց մինչև այժմ համոզիչ գիտական բացատրություն, հիմնավորում չեն ստացել:

3. Վստահորեն կարելի է ասել, որ սոցիալ-դերային մոտեցումը հնարավորություն է տալիս, որպեսզի ընտանիքի ծագումը և նրա պատմական ձևերի փոփոխությունները դիտարկվեն որպես կարգավիճակ-դերային համակարգի փոփոխությունների մի շարք, որը տարբեր էթնիկ միջավայրերում դրսևորվում է տարբեր առանձնահատկություններով: Պատմականորեն փոփոխվում են ոչ միայն կարգավիճակները և ընտանիքի անդամների դերերը, այլ նաև այն սանկցիաները, որոնց օգնությամբ սոցիալական միկրոմիջավայրը վերահսկում է ընտանեկան կյանքը և առաջին հերթին՝ նրանց կողմից իրենց դերերի կատարումը:

4.Երեխան հենց ծնողների ընտանիքում է, որ առաջին անգամ հասկանում է, թե ինչ բան է ընտանեկան կոնֆլիկտը, ինչպես և ինչ պատճառներով է այն ծագում, ինչպես է այն արտահայտվում և ինչպես՝ հարթվում: Ընտանիքում երեխան ձեռք է բերում սոցիալական դերերի կատարման առաջին փորձը, զգում է և աստիճանաբար գիտակցում դերային սպասումների գոյությունը, դրանց բախումները և ընտանեկան դինամիկայի մյուս կողմերը:

5.Հետազոտությունների արդյունքները թույլ են տվել եզրակացնել, որ հենց ընտանիքում է երեխան ձեռք բերում այն պատկերացումը մարդու մասին, որը սոցիալական հոգեբանության մեջ ստացել է «անձի լատենտ տեսություն» անվանումը: Միաժամանակ ընտանեկան սոցիալականացման ընթացքում յուրաքանչյուր անհատ ձեռք է բերում իր սեփական արժեհամակարգի մի մասը:

6.Մեր հետազոտություններում հաստատվեց, որ ընտանիքի անդամների փոխադարձ իդենտիֆիկացիան, միմյանց դերերի ընդունումը և դրա հիման վրա

առաջացող էմպաթիան բախումների հարթման և դրանց ճգնաժամի վերածվելու կանխարգելման արդյունավետ միջոցներ են:

7.Սոցիալ- դերային մոտեցումը թույլ տվեց բացահայտել ընտանիքի անդամների ստատուս-դերային փոխներգործության գենետիկ ասպեկտը: Հենց դերային փոխներգործության ընթացքում են ծագում և ձևավորվում ծնողի և զավակի կարգավիճակները, ինչպես նաև երեխայի հիմնական անձնային գծերը: Երբ ընտանիքում հայտնվում է նոր անդամ, նա նույնպես ձեռք է բերում որոշակի կարգավիճակ և սկսում է կատարել համապատասխան դեր: Ընտանիքում անձի ձևավորումը առավելապես կարգավիճակ-դերային սոցիալականացման գործընթաց է, թեև ո'չ հոգեկան կյանքը, ո'չ վարքն ընդհանրապես չի կարելի պատկերել միայն ընտանիքում դերերի կատարման ձևով: Կապված կարգավիճակների և դերերի առաջացման, ինչպես նաև ընտանիքում անձի ձևավորման գործընթացի հետ, բացահայտվեց ընտանիքի՝ որպես սոցիալական խմբի, հասունության մակարդակների հիմնախնդիրը:

8.Անցկացված հետազոտությունների արդյունքում մենք կարողացանք ցույց տալ, որ գոյություն ունեն ընտանեկան կոնֆլիկտների զարգացման փուլեր, սկսած էքսպեկտացիաների հակասության փուլից մինչև դրանց բախման փուլը, և եկանք այն եզրակացության, որ ընտանեկան բախումները և ճգնաժամերը հիմնականում ունեն դերային բնույթ:

9.Ընտանիքում տեղի է ունենում պաշտոնական և ոչ պաշտոնական դերերի և կարգավիճակների առավելապես ենթագիտակցական փոխներգործություն, ինչի արդյունքում ընտանիքի յուրաքանչյուր անդամի վարքը մնացածների հանդեպ ձեռք է բերում սուբյեկտիվ և յուրահատուկ բնույթ: Վերոգրյալը նորովի բացատրություն է տալիս սուբյեկտիվությանը դերերի տեսության և ընտանիքի սոցիոմետրիայի տեսության մեջ:

10.Կատարած տեսական և փորձարարական հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ երբ ընտանիքում ծագում են նոր խնդիրներ, իսկ դրանց լուծման համար՝ նոր կոգնիտիվ դերեր, և այդ ճանաչողական աշխատանքը ժամանակ առ ժամանակ կրկնվում է, ապա ընտանիքում առաջանում են նոր կարգավիճակներ: Այս գաղափարը ընդլայնում է սոցիալական կարգավիճակների և դերերի տեսությունը, մասնավորապես՝ ընտանիքի սոցիալ-դերային տեսությունը:

11.Հանգեցինք այն եզրակացության, որ ընտանեկան կյանքը լավագույնս հասկանալու համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել դերերի ընդունման գործընթացին, քանի որ միմյանց դերերի ընդունումը ամուսինների և ընտանիքի այլ անդամների փոխադարձ հարմարման գլխավոր պայմանն է:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ տպագիր աշխատանքներում.

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն (մեթոդաբանական վերլուծություն), Երևան, 2010թ, 457 էջ
2. Седракян С.А “Социальная psихология семьи”, Москва-Воронеж, 2011 г., 368с.-(серия “ Библиотека psихолога”).
3. Sedrakyan S. A. – Family Psychology. Methodological analysis, San Bernardino, USA, 2014, 527 p.
4. Սեդրակյան Ս.Ա. Աշխատավորական գերդաստանների ձևավորման գործում սոցիալականի և հոգեբանականի հարաբերակցությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1989թ., թիվ 3, էջ 207-212:
5. Սեդրակյան Ս.Ա., Հարությունյան Ն. Ա. Ներընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց հաղթահարման ուղիները, «Հոգեբանությունը և կյանքը», № 3, 2001թ., էջ 47-56:
6. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության ժամանակակից խնդիրները, «Հոգեբանությունը և կյանքը», № 3-4, 2008թ., էջ 11-17:
7. Սեդրակյան Ս.Ա., Պետրոսյան Հ. Լ. Ընտանեկան թերապիայի դերը կրտսեր դպրոցականների վախերի հաղթահարման գործում, «Հոգեբանությունը և կյանքը», № 3-4, 2009թ., էջ 21-25:
8. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանական խնդիրներին դերային մոտեցման էությունը, «Հոգեբանությունը և կյանքը», № 1-2, «Զանգակ-97», Երևան, 2010, էջ 9-22:
9. Սեդրակյան Ս.Ա. Ընտանեկան դերերի ծագումը և կապը ինքնագիտակցության հետ, Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները (միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, էջ 174-176:
10. Սեդրակյան Ս.Ա., Մուրադյան Ա. Ռ. Դերային բախումները և դերային մրցակցության դրսևորումները ներընտանեկան փոխհարաբերություններում, «Հոգեբանությունը և կյանքը», №.1-2, «Զանգակ-97», Երևան, 2011, էջ 75-80:
11. Սեդրակյան Ս.Ա. Սոցիալական սպասումների բնույթն ու տեսակները, Համաժողովի նյութեր «Հասարակություն, ընտանիք, դեռահաս. արդիական խնդիրներ Հայաստանում և սփյուռքում»,Երևան 2012, էջ 119-122:
12. Սեդրակյան Ս.Ա. Տրանսֆերի սկզբունքը ընտանեկան դերերի համատեքստում, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2013թ., էջ 169-172:

13. Սեդրակյան Ս. Ա., Ստեփանյան Ա. Ա. Ընտանիքի գործառույթների հարցի շուրջ (մեթոդաբանական վերլուծություն), «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, № 3, 2013, էջ 117-124:
14. Седракян С. А. Из истории изучения психологических вопросов семьи. В. сб. Всесоюзная конференция “Актуальные проблемы истории психологии” (Тексты докладов), Ереван, 1984г, т. II, с. 105-110.
15. Седракян С. А., Берберян А. С. Представление о семейных ценностях у современной молодежи России и Армении. Семья в контексте педагогических, психологических и социологических исследований. Материалы межд. научно-пр. конференции, Пенза-Ереван-Прага, 5-6 октября 2010 г., с. 173-178.
16. Седракян С. А. Семья как социальная группа и ее социально-психологическая структура. В жур. “Семейная психология и семейная терапия”, Научно-практический журнал, № 3, июль-семтябрь, 2011, Москва, с. 3-28.
17. Sedrakyan S. A. The Social and Psychological Peculiarities in Armenian Family. “in European Congress of Psychology”, July 2-7, 1995, Athens, Greece – p. 171.
18. Sedrakyan S. A., Sedrakyan A. E. Influence of Socioeconomic Changes on Inner Family Relations, 8 th WORLD CONGRESS. International Family Therapy Association (IFTA). Global dialogue DIVERSITY AND UNITY, “A process –oriented –inter –discopinary -interprofessional”, Greece, Athens, July 1996, p. 149.
19. Sedrakyan S. A., Sedrakyan A. E. Children’s fears and their overcoming in the family. A world Between War and Peace: Towards Healthy People, Families and Societies. Jerusalem, Israel. March 11-13, 1997, p. 41–42.
20. Sedrakyan S. A., Harutyunyan N. A. Principal Causes of Conflicts in the Armenian Families. A world Between War and Peace: Towards Healthy People, Families and Societies. Jerusalem, Israel. March 11-13, 1997, p. 113.
21. Sedrakyan S. A. The Influence of Economic Changes on the Family Psychological Atmosphere. Abstracts of the 27 th International Congress of Psychology, Stockholm, Sweden, 2000 – p. 163-164.
22. Sedrakyan S. A. Individual and group stress reactions. Abstracts of the 29 th International Congress of Psychology, Berlin, July 20-25, 2008 – p. 80-81.
23. Sedrakyan S. A., Baghdasaryan H. V. Self-appraisal and family relations.The 13th European Congress of Psychology, Stockholm,Sweden 9-12 July, 2013 – p.257.

СЕДРАК АГАСИЕВИЧ СЕДРАКЯН

«СОЦИАЛЬНО-РОЛЕВОЙ ПОДХОД В ПСИХОЛОГИИ СЕМЬИ»

Диссертация на соискание ученой степени доктора психологических наук по специальности – 00.03 «Социальная психология (межличностные отношения, семейная, групповая деятельность)»
Защита диссертации состоится 8-го июля в 12:00 ч. на заседании специализированного совета 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу: г. Ереван, 0010, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В условиях радикальных изменений общества и стремительной социодинамики, проблема семьи, как социального иститута, и внутрисемейных взаимоотношений приобретает особое значение. Появляется необходимость комплексного исследования социально-психологических механизмов образования семьи и ее дальнейшего развития. Значительный рост исследований в этой области привел к активной дискуссии о возможности выделения семьи в качестве отдельного предмета исследования. На сегодняшний день новое междисциплинарное направление – психология семьи, требует дополнительных научных разработок с целью повышения эффективности семейного консультирования. Потребность в решении вопросов исследования внутрисемейных взаимоотношений возникает по актуальным в настоящее время следующим причинам: изменение качества брака, дезадаптация членов семьи, ролевые конфликты и кризисы семейных отношений. В связи с этим возрастает роль исследования семьи как социально-психологической динамической категории.

Научная новизна исследования заключается в методологическом, теоретическом и практическом применении социально-ролевого подхода в целях исследования динамики, структурных и функциональных единиц внутрисемейных взаимоотношений. С позиций социально-психологической теории ролей на основе методологического анализа построена система исследования широкого спектра межролевых взаимоотношений в семье. Эта система является основанием для формирования различного рода социальных и психологических программ, направленных на решение основных вопросов психологии семьи. В работе определены принципы, отражающие специфику семейных отношений, а также рассмотрены стадии развития семьи, последствия внутрисемейной социализации и межролевых конфликтов.

Подтверждается гипотеза о трансферных отношениях, в результате которых личность перемещает в более широкую общественную среду модели, полученные в течении внутрисемейной социализации.

Данные, полученные в итоге комплексного исследования семьи, послужат источником для разработки научных принципов в психологии семьи и брака, систематическое внедрение которых обеспечит бурный рост нового направления, связанного с выделением социально-ролевого подхода.

Теоретическая значимость исследования. Проделавшая работа обосновывает необходимость многопланового исследования семьи и важность применения социально-ролевого подхода. Освещены основные психологические механизмы функционирования, развития и жизнедеятельности семьи, внутрисемейной социализации и ее последствий, выраженных патогенными ролями, конфликтами и дезадаптацией. В рамках психологии семьи и теории ролей в целом, автор излагает концепцию о переносе результатов внутрисемейной социализации в область новых социальных взаимоотношений. Эта концепция активно обсуждается посредством принципа транзитивности и индукции новых семейных конфликтов. Значительное место отводится проблемам межсупружеского общения, ролевого соответствия и брачного партнерства.

Практическая значимость исследования. Принципы и концепции, раскрытые в теоретическом анализе, а также результаты исследования используются в качестве базы для учебного материала по курсу “Семейная психология” в вузах. Теоретические положения и выводы, содержащиеся в работе, могут стать источником для создания учебных пособий, методических руководств по психологии семьи и брака, а также могут быть использованы в системе подготовки и повышения квалификации кадров, осуществляющих коррекционное воздействие как на семью в целом, так и на отдельных ее членов. Практические результаты уже используются в некоторых специальных школах и учреждениях в качестве материала для педагогов в работе с детьми и их семьями.

Данные практического значения, полученные в результате методологического анализа проблем психологии семьи, служат источником для разработки социально-психологических рекомендаций, направленных на оптимизацию внутрисемейных отношений.

Апробация результатов исследования. Результаты исследования обсуждались на научных и республиканских конференциях в течение 2000-2014г. По теме опубликованы двадцать научных статей и изданы три монографии, отражающие методологический анализ психологии семьи и адресованные студентам психологических факультетов и широкому кругу читателей, интересующихся проблемами семьи и брака.

Объем и структура работы. Представленная диссертационная работа состоит из введения, 5-и глав, заключения, списка использованной литературы. Общий объем составляет 297страниц.

SEDRAK SEDRAKYAN

"SOCIAL ROLE APPROACH IN FAMILY PSYCHOLOGY"

A thesis for the degree of Doctor of psychology in specialty- 00.03 " Social Psychology (interpersonal relations, family, group activity)"
The defence of dissertation will be held on 8th of July, on 12:00 PM at the meeting of the specialized council 064 CHA for granting academic degrees in Armenian Pedagogical University after Kh.Abovyan, address: Yerevan city, 0010, Tigran Mets 17 street

RESUME

Actuality of the research The problem of family as a social institute, under conditions of radical changes of society and sociodynamics and in innerfamilial relations obtain special importance. Necessity emerges for the complex research of sociopsychological mechanizms of creation of family and its future development.The growth of researches in this sphere has brought to the active discussions on the necessity to emphasize the family as a separate research subject.Nowadays, the new innerdisciplinary direction-family psychology, demands extra scientific development for the purpose of effective family consultation.

The demand of investigational questions of innerfamilial relations emerges from modern actual causes: modification of wedlock quality, members of family disadaptation, role conflicts and crisis of family relations. Thereby, arises the role of research of family as a psychosocial dynamic category.

Scientific innovation of research consists of methodological, theoretical and practical use of social role approach in the goal of dynamic research, structure and function unit in innerfamilial relations. From the position of psychosocial role theory in the basis of methodological analyses is built a research system of inner relations of family.This system is the basis for different forms of social and psychological programs, for solving primary questions of family psychology. There are defined principles which reflect specifics of familial relations, also examined stages of development of the family, consequences of innerfamilial socialization and interrole conflicts.

It's been confirmed the hypothesis about the transference relationship, a result of which a person moves into a broader model of social environment received during the innerfamilial socialization.

Data obtained as a result of comprehensive study of the family, provide a source for the development of scientific principles in the psychology of family and wedlock systematic introduction of which provide the rapid growth of a new direction associated with the release of the social-role approach.

Theoretical significance of research Accomplished work proves the necessity of a multi-faceted study of the family and the importance of applying social-role approach. It is illuminated the main psychological mechanizms of the function, development and vital activity of the family, innerfamilial socialization and its consequences, expressed with pathogenic roles, conflicts and disadaptation. Within the framework of family psychology and theory roles in generally, the author expounds concept of transfer results in the sphere of innerfamilial socialization of new social relationships. This concept is discussed actively by the principle of transitivity and induction of new family conflicts. Significant place is given to the problems between spousal communication, role accordance and marital partnership.

Practical significance of research

Principles and concepts disclosed in the theoretical analyses,also results of research are used as a basis for training material at the rate of "Family psychology" in the universities. Theoretical propositions and conclusions in the research can be the source of creation of tutorials , methodological guidelines for psychology of family and wedlock, also can be used in the system of training and upgrading of personnel, implementing corrective impact on both the family as a whole, as well as on its individual family members.

Practical results are already used in some special schools as a material for pedagogues in the work with children and their families.

Data of practical significance received in the result of methodological analyses of problems of family psychology serve as a source for development psychosocial recommendations directed on optimizing innerfamilial relationship.

Approbation of the research results

The results of research have been discussed in scientific and republical conferences from 2000-2014. It has been published 20 scientific articles and 3 monographs on the theme, reflecting methodological analyses of family psychology addressed to the students of psychology faculties and to the wide range of readers who are interested in the problems of family and wedlock.

Volume and structure of research Presented thesis consists of an introduction, 5 chapters, a conclusion and a list of used literature. The whole volume consists of 297 pages.